

ՂՐԻՒՄ ՅԵՂԱՎՈՅՆ



ՀԵՂԱՎՈՅՆ

835  
9 - 96

ԴԵՏՐԱ



30 MAY 2011

835  
4-96  
wr

Հայոց

ԳՐԻՄՄ ՅԵՂԲԱՑՐՆԵՐԻ  
ՀԵՓԻԱԹՆԵՐԸ

ՓՈԽԱԴՐԵՑ

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հեղական Հրամագիր թ 804  
Տերեկան 1936

1283  
6010

## ԱՆՏԱՌԻ ՏՆԱԿԸ

Մի խոր անտառի բերանում մի խրճիթ և լինում։  
Են խրճիթում կնկա ու յերեք աղջիկների հետ ապշ-  
րելիս և լինում մի աղքատ փայտահատ։

Մի առավոտ, գործի գնալիս, կնկանն ասում ե.

—Այ կնիկ, եսոր բանս մինչեւ կեսոր չեմ վերջաց-  
նիլ. մեր մեծ աղջկա հետ ինձ համար ճաշ կուզար-  
կես անտառ։ Յես ել հետո մի տոպրակ կորեկ կը-  
վերցնեմ, շաղ տալով կերթամ, վոր են նշանով գա-  
ու ճամփեն չկորցնի։

Ճաշ և դառնում թե չե, մեծ աղջիկը կերակուրն առ-  
նում ե, ճամփա ընկնում։ Բայց ծտերը, արտուտները,  
սարեկներն ու գեղձանիկները շաղ տված կորեկն արգեն  
վեր քաղած են լինում, ու աղջիկը չի կարողանում հոր  
հետքը գտնի։ Գնում ե, գնում, մինչեւ արել մեր և  
մտնում ու մութը վրա յե հասնում անտառում։ Ծա-  
ռերը շրջում են խավարում, բուերը կանչում, կունչում,  
ու աղջիկը սկսում է զախենալ։

Մին ել տեսնում ե հեռվում, ծառերի արանքից մի  
կրակ ե փայլվում:

— Ենտեղ յերկի մարդիկ են ապրում, գնամ նը-  
րանց մոտ մնամ ես զիշել, — մտածում ե աղջիկն ու  
գնում են կրակի վրա:

Գնում ե համնում մի տնակի դուռը ծեծում ե:

— Ո՞վ ես, ներս արի, — կանչում ե ներսից մի  
ձայն:

Աղջիկը ներս ե մտնում. տեսնում ե ճրես նստած  
մի ալեոր մարդ, զլուխը կախ արած, սպիտակ մի-  
բուքն ալիքաձև իջնում ե մինչև գետին: Իսկ հն կող-  
մը մի չալ կով, մի հավ ու մի աքլոր:

Աղջիկը պատմում է ծերին, թե ինչպես ե ինքը մո-  
լորվել անտառում ու խնդրում ե, վոր տեղ տա զի-  
շերը մնալու:

Ծերունին դիմում ե իր կենդանիներին:

— Սիրուն հավիկ, իմ լավիկ,

Զալ ու նախշուն իմ կովիկ,

Ցել դու, աքլոր փահլան,

Ի՞նչ եք ասում դուք սրան:

Կենդանիները միասին պատասխանում են.

— Լավ:

Են ժամանակ ծերունին աղջկանն ասում ե.

— Համեցնք, մեր աչքի վրա, սիրուն աղջիկ, մեր  
դուռը բաց ե, տունը լիքը: Համեցնք, մոտեցիր ոջա-  
խին, կերակուր շինի մեղ համար ել, քեզ համար ել:

Աղջիկը մտնում է խոհանոց և, ճիշտ վոր ամեն-  
բան դտնում ե առատ-առատ: Մի լավ ընթրիք ե  
պատրաստում, բերում ե ծերունու առաջ լիքը սեղան  
ե բաց անում, ինքն ել նրա հետ նստում, ուտում,

4

խմում, կշտանում: Վոր կշտանում ե պրծնում, — բա-  
յես հոգնած եմ, — ասում ե, — հիմի վհրտեղ քնեմ: Ես-  
տեղ կովը, համ ու աքլորը պատասխանում են.

— Վողջ դրա հետ դու կերար

Ու իլրմեցիր, ինչ վոր կար,

Մըտիկ չարիր իսկի մեզ.

Գընա, քընի ուր կուզես:

Են ժամանակ ծերունին ասում ե.

— Բարձրացի, սանդուխքի գլխին մի սենյակ կա:  
Են սենյակում յերկու անկողին կա. անկողինները  
պատրաստի, յես ել կգամ, կքնենք:

Աղջիկը վերև ե բարձրանում, անկողինները գցում  
ու ել ծերունուն չի սպասում, ինքը պառկում ե քը-  
նում: Մի քիչ հետո ծերունին գալիս ե, մոմի լուսով  
նայում աղջկանը ու գլուխը ժաժ տալի:

Գիշերվա մի ժամանակ, յերբ տեսնում ե խորը քնած  
ե, մահճակալի տակին մի գաղտնի դուռն ե լինում,  
բաց ե անում, աղջկանը թողնում ցած ու կրկին փա-  
կում:

Փայտահատը իրիկունը տուն ե գալի, բարկանում  
ե կնկա վրա, վոր իրեն ամբողջ որը սոված ե թո-  
ղել:

— Յես ինչ անեմ, — պատասխանում ե կնիկը,  
ճաշը տվել եմ մեր մեծ աղջկանը — լրկել, ինչպես յե-  
րեւում ե, ճամփեն կորցրել ե, չի գտել, ինքն ել յետ  
չի յեկել դեռ:

Փայտահատը մյուս որն ել առավոտը վաղ վեր ե  
կենում գնում անտառը: Պատվիրում ե, վոր ես ան-  
դամ միջնեկ աղջիկը տանի ճաշը:

— Եսոր հետո վոսպ կվերցնեմ, — ասում ե, — վոր

5

Ճամփին շաղ տամ: Վոսպը կորեկից խոշոր ե, աղջիկը հեշտ կտեսնի ու ճամփեն չի կորցնիլ:

Կեսորին միջնեկ աղջիկը ճաշն առնում ե ու ճամփա ընկնում: Գնում ե, գնում, վոչ միտեղ վոսպ չի դտնում: Դու միասիլ դարձյալ թոշունները կերել են, մի հատ ել չեն թողել:

Աղջիկն անտառում թափառում ե, թափառում, դիշերը ընկնում ելի նույն ծերունու մոտ, հաց ու քնելու տեղ ե խնդրում: Ծերունին դիմում ե կովին, հազվին ու աքլորին.

— Սիրուն հավիկ, իմ լավիկ,  
Չալ ու նախշուն իմ կովիկ,  
Յեվ դու, աքլոր փահլւան,  
Ի՞նչ եք ասում դուք սըրան:

— Լմվ, — պատասխանում են կենդանիները: Միջնեկ քույրն ել, մեծ քրոջ նման, ընթրիք ե պատրաստում, ծերի հետ ուտում, խմում, կշտանում: Կենդանիների վրա ուշք ել չի դարձնում: Յերբ հարցնում ե, թե՝ յես վորտեղ պիտի քնեմ, կենդանիները պատասխանում են.

— Վող դրա հետ դու կերար  
Ու խըմեցիր, ինչ վոր կար,  
Մըտիկ չարիր իսկի մեզ.  
Գընա, քընի ուր կուզես:

Հենց նա ել գնում ե քնում թե չե, յետեից գնում: Ե ծերունին, գլուխը թափահարում ու դարձյալ թողնում ե ներքեւ:

Յերբորդ առավոտը փայտահատը կնկանն առ սում ե,

— Եսոր մեր փոքրիկ աղջկա ձեռքով դրկի ճաշը: Նա բարի յե ու ականջով: Նա ճամփեն կգտնի, իր քույրերի նման չի, վոր դես ու դեն ընկնի:

Մայրը չի ուզում յերբորդ աղջկանն ել անտառը դրկի: Լաց ե լինում, ասում ե — աշքիս սև ու սիպ տակը սա յե մնացել, ինչու յես ուզում սրան ել կորցընես մեծերի նման:

— Դու հանգիստ կաց, — ասում ե փայտահատը, — սա կորչիկ չի, սա հնպես խելոք ե վոր... յես ել հետա եսոր սիսեռ կտանեմ ճամփին շաղ տալու: Միսեռը վոսպ հո չի, նրանով անպատճառ ճամփեն կգտնի:

Բայց յերբ աղջիկը ճաշն առած անտառն ե մըտնում, թոշուններն արդեն սիսեռը կերած են լինում: Աղջիկը մնում ե տարակուսած: Չի իմանում՝ վար կողմը գնա: Մտածում ե, դարդ ե անում, թե հիմի հայրը կոսվի, մայրը լաց կլինի..

Ման ե գալի, ման, հորը չի գտնում: Յերբ մութն ընկնում ե, հեռվից տեսնում ե անտառի տնակի լուսն ու գնում ե են լուսի վրա: Մտնում ե ներս, տեղ ե խնդրում, ու ալեհեր ծերունին դարձյալ դիմում ե իր կենդանիներին:

— Սիրուն հավիկ, իմ լավիկ,  
Չալ ու նախշուն իմ կովիկ,  
Յեվ դու, աքլոր փահլւան,  
Ի՞նչ եք ասում դուք սըրան:

— Լմվ... պատասխանում են կենդանիները: Են ժամանակ աղջիկը մոտենում ե, գուրգուրում հավին ու աքլորին, կովի ճակարը քորում: Ծերի պատվիրով ընթրիք ե պատրաստում, գնում սեղանին ու ասում.

— Ինչո՞ւ յես պետք եռ ուտեմ, ես բարի կենդանիները քաղցած նայեն:

Գնում ե, կուտ բերում ածում հավի ու աքլորի առջե, կովի համար ել մի խորու խոտ:

— Կերեք, — ասում ե, — իմ սիրելիք, այ հիմի ջուր ել կրերեմ: Գնում ե մի դույլ ջուր ել բերում դնում առաջնօրը:

Ամենքին կշացնում ե, նոր ինքն ե նստում ու տում, ինչ վոր թողել եր ծերունին: Իսկ յերբ քնելու ժամանակը գալիս ե, ասում ե.

— Ժամանակը չի արդյոք, վոր ամենքս ել հանգըստանանք...

Սիրուն հավիկ, իմ լավիկ,  
Զալ ու նախշուն իմ կովիկ,  
Յեվ դու, աքլոր փահլւան,  
Ի՞նչ եք ասում դուք սըրան:

— Լավ, — պատասխանում են կենդանիները.  
— Մեզ հետ կերար դու միասին  
Ու հոգացիր մեր մասին,  
Բարի զիշեր քեզ, բարի,  
Մուրազդ աստված կատարի:

Եստեղ աղջիկը բարձրանում ե վերև, անկողինները պատրաստում: Ծերունին դալիս ե քնում: Ինքն ել մյուս մահճակալին ե պառկում ու քուն մտնում հանգիստ:

Դիշերվա մի ժամանակ տունը հանկարծ դղրդում ե, կարծես քանդիւում ու տակն ու վրա յել լինում: Աղջիկը վախեցած զարթնում ե, բայց աղմուկն անց-

նում ե, ինքն ել քնում ե նորից:

Առավոտը աչքը բաց ե անում — ի՞նչ ե տեսնում:

Տեսնում ե պառկած մի մեծ, շքեղ զարդարած ու կահավորած դահլիճում, շուրջը թափիշ ու վոսկի, հարավային փարթամ բույսեր ու ծաղիկներ այրվում վառվում են առավոտյան արեի ճառագայթների տակ: Տեսնում ե, բայց աչքերին չի հավատում, ասում ե՝ յերազի մեջ եմ յերեի: Եսպես մտածելիս ներս են մտնում յերեք ճոխ հագնված ծառաներ, խոնարհ գըլուխ են տալի ու հարցնում.

— Ի՞նչ կհրամայեք, տիրուհի,

— Լավ, լավ, գնացեք, — պատասխանում ե քնաթաթախ աղջիկը, — հիմի վեր կկենամ, ծերունու համար կերակուր կպատրաստեմ, կովին, հավին ու աքլորին կը հոգամ:

Կարծում ե, թե ծերունին ել արդեն վեր ե կացել: Նայում ե նրա անկողնին, տեսնում ե՝ ծերունին չկա, տեղը պառկած ե մի ոտար ջահել ու գեղեցիկ յերիտասարդ...

Յեվ ահա յերիտասարդը աչքերը բաց ե անում ու եսպես խոսում զարմացած աղջկա հետ:

— Լսի, սիրուն աղջիկ: Յես ես յերկրի թագավորի վորդին եմ: Զար վհուկը կախարդել եր ինձ ու դատապարտել վոր յես ծերի կերպարանքով ապրելի անտառում, վոչ վոք ել չլիներ ինձ հետ, բացի իմ յերեք ծառաները, նրանք ել կովի, հավի ու աքլորի կերպարանքով: Յեվ եղանակ պիտք ե մնայինք մինչեւ հայտնվեր են բարի աղջիկը, են քնքույշ սիրտը, վոր վոչ միայն մարդկանց, այլև կենդանիներին լիներ սիրող ու կարեկից:

Են աղջիկը դու յեղար:  
Քու շնորհիվ ես գիշեր — կեսպիշնը ինը, մենք ամեն-

Քըս աղատվեցինք կախարդանքից ու իմ պալատը,  
վոր դարձել եր անտառի մի հին տնակ, նորից դար-  
ձավ առաջվան պալատը:

Ու կանչում ե թագավորազնը իր ծառաներին, վոր  
գնան աղջկա ծնողներին բերեն հարսանիքին:

— Բայց վմբանեղ են իմ քուլըերը, — արցնում ե  
աղջիկը:

— Նրանց յես փակել եմ ներքնահարկում, — պա-  
տասխանում ե յերիտասարդը: — Եզուց կուղարկեմ ան-  
տառը, հնտեղ ածխարարի մոտ ծառային ու հնքան  
մնան, մինչև վոր դառնան ավելի բարի ու կսովորեն-  
մտածել կենդանիների մասին:

(1908)



## ԼՈՒՍԵՐԵՍՆ ՈՒ ՎԱՐԴԵՐԵՍԸ

Հինում ե չի լինում մի աղքատ վորբեայրի կին: Ապրելիս ե լինում մի փոքրիկ տնակում: Տնակի առ-  
ջև մի պարտեղ ե ունենում, պարտեղի մեջ յերկու  
վարդի թուփ, մինը սպիտակ վարդի, մյուսը կարմիր:  
Են վարդի թփերի նման ել յերկու փոքրիկ աղջիկ ե  
ունենում. մեկի անունը լուսերես, մյուսինը վարդե-  
րես: Յերկուսն ել ենքան եյին լավը ու բարի, ենքան  
սրտով մաքուր ու աշխատասեր, վոր կարծես թե հենց  
են յերկուսն եյին ենպես, վոր կային բովանդակ աշ-  
խարհքում: Միայն թե լուսերեսն ավելի հանգիստ եր-

ու քնքուց, իսկ Վարդերեսն ավելի կայտառ ու աշ-  
խույժ:

Վարդերեսը շատ եր սիրում հանդերում ու մար-  
գերում թոշկոտել, ծաղիկ քաղել ու թոչուն բռնել,  
իսկ Լուսերեսը նստում եր տանը, տնտեսության մեջ  
ոգնում եր մորը, կամ թե չե, լեթե գործ չկար, նրա  
համար զիրք եր կարդում: Յերկու քուցըն ել ենքան  
եյին իրար սիրում, վոր հենց թե թեր տված եին  
ման գալի, ու յերբ Լուսերեսն ասում եր.

— Մենք յերեք չպետք ե բաժանվենք իրա-  
րից, — Վարդերեսը պատասխանում եր.

— Յերեք, քանի կենդանի յենք:  
իսկ մերն ավելացնում եր.

— Մեկդ ինչ վոր կունենաք՝ պետք ե կիսեք մյու-  
սիդ հետ:

Յերկուսով հաճախ գնում վազվում եյին անտառնե-  
րում ու պառող եյին քաղում. ու վոչ մի կենդանի  
մնաս չեր տալիս, ամենքը վստահ գալիս մոտենում  
եյին նրանց: Նապաստելը հենց նրանց ձեռքից առ-  
նում վորոճում եր կաղամքի թերթիկները, յեղնիկն  
արածում եր նրանց կողքին, յեղջերուն անհոգ ու  
զվարթ անցնում եր նրանց մոտից, իսկ թոչունները  
հանդիսառ ուսներին թառած յերգում եյին, ինչպես կա-  
րող եյին յերգել և ինչ վոր գիտեյին: Յեթե բան ե,  
ուշանում եյին անտառում ու զիշերը վրա յեր հաս-  
նում, միասին պառկում եյին մամուռի վրա ու քնում  
մինչև լուսարաց: Իրենց մերն ել գիտեր ու անհան-  
գիստ չեր լինում,

Մի անգամ ել, յերբ անտառում զիշերում են ու  
լուսաբացին զարթնում են՝ տեսնում են կողքներնին

կանգնած ճերմակ ու փայլուն շորերով մի սիրուն-  
յերեխա: Ես յերեխան վեր ե կենում, ժպտալով նրանց  
նայում ու, առանց մի խռոք ասելու, հեռանում, մըտ-  
նում անտառի խորքն, անհետանում:

Եստեղ յերեխեքը մարիկ են տալիս չորս կողմերը,  
տեսնում են, վոր գրիկունը մթնով յեկել են քնել մի  
անդունզի յեզերքի ու յեթե մթնումը մի յերկու քայլ  
ել արած լինելին, պետք ե անդունզը լինելին գլոր-  
ված: Դալիս են իրենց մորը պատմում: Մերն ասում են:

— Ես անպատճառ պահապան հրեշտակն ինքն ե  
լեղել, վոր միշտ պահպանում ե բարի յերեխանց:

Լուսերեսն ու Վարդերեսն իրենց մոր տնակն են-  
պես իստակ ու մաքուր եյին պահում, վոր մարիկ ա-  
նելիս մարդու զբուր եր գալիս.

Ամառը զլիսավորապես Վարդերեսն եր տան բանը  
զինում ու ամեն առավոտ, մոր զարթնելուց առաջ,  
անկողնի կողքին մի փունջ ծաղիկ եր գնում, փնջի  
մեջ ել յերկու վարդ՝ մինը սպիտակ, մյուսը կարմիր:  
Զմեռը Լուսերեսն եր կրակ անում ու պղինձը գնում  
կրակին: Պղինձն ել ենալես մաքուր սրբած եր լինում,  
վոր վոսկու նման պսպղում եր: Իրիկուններն ել, յերբ  
դուրսը ձյունը փաթիլ-փաթիլ բրդում եր, մերն ա-  
սում եր.

— Լուսիկ ջան, գնա դուան փակը զցիր: — Հետո  
նստում եյին բուխարու առջե: Մերը գիրք եր կար-  
դում աղջիկների համար, իսկ աղջիկները լսում եյին  
ու մանում: Կողքներին պառկած եր լինում իրենց  
գառը, յետեները թառի վրա քնած սպիտակ աղավ-  
նին, գլուխը կոխած թեր տակը:

Մի իրիկուն ել, յերբ եսպես նստած են լինում,  
մինը դուռը ծեծում ե: Մերն ասում ե,

— Վարդուշ ջան, շուտ վեր կաց դուռը բաց արա.  
անոթեան ճամփորդ կլինի—դուռը ծեծում ե:

Վարդերեսը գնում ե դրան վակը յետ դցում, համոզ  
ված, վոր դուռը ծեծողը մի խեղճ մարդ պիտի լինի.  
մին ել ի՞նչ տեսնի.—դուան յետել կանոնած ե մի ա-  
հազին արջ, վոր դուռը բացվելուն պես ներս ե կո-  
խում իք հաստ գլուխը: Վարդերեսը վախից ճշում ե  
ու յետ թուշում, գառն սկսում ե մայել, աղամին թե-  
վերն ե թափահարում, իսկ լուսերեսը մտնում ե մոր  
մահճակալի յետերը: Այնինչ արջը լեզու յե լինում ու  
խոսում: Ասում ե.

— Ինչու յեք վախենում. ինձանից մի վախենաք.  
յես ձեզ վնաս չեմ տալ: Թիչ եր մնում ցրտից սառչե.  
յի, յեկա մի քիչ տաքանամ:

— Վայ, խեղճ իմ արջ ախպեր,—բացականչում ե  
մայրը:—Դե արի, արի կրակից մոտիկ պառկիր, մի-  
այն թե զգուշ կաց, բուրդդ չմրկի... Աղջկերք, Վար-  
դուշ ջան, Լուսիկ ջան, դուրս յեկեք, յեկեք եստեղ,  
արջ ախպերը ձեզ ձեռք չի տալ, արջ ախպերը բա-  
րի յե:

Աղջիկները դուրս են գալիս, կամաց-կամաց մո-  
տենում են արջին, գառն ել, աղամին ել, ու շուտով  
ամեն ահ ու յերկուդ վերանում ե մեջտեղից: Արջն  
ել ասում ե.

— Յերեխեք ջան, թե կարաք՝ ես իմ բրդի ձյունը  
մի թափ տվեք:

Աղջիկները վազում են ավելը բերում, արջի բուր-  
դը մաքրում սրբում են, ու արջը բավականությու-  
նից մռնչալով մեկնվում ե կրակի առջե: Աղջկերքը

ձեռաց ընտելանում են իրենց անճոռնի հյուրին ու  
սկսում են հետը հանաքներ անել թրդի հետ են խա-  
ղում, ականջներից են քաշում, մեջքին են կանգնում,  
հատակին դես ու դեն են գլորում, ճիպոտով խփում  
են, իսկ յեթե սկսում ե վըաչալ՝ ծիծաղից թուլանում



են: Արջի իրեն քեֆն ել և գալիս: Բայց յերբ շատ են  
նեղացնում՝ վըոչում ե.

— Մի տանջեք ինձ, մի սպանեք, այ աղջկերք,  
Այ լուսերես, այ Վարդերես,  
Զեր սիրելի փեսան եմ յես:

Քնելու ժամանակը վոր գալիս և ու աղջիկները  
գնում են քնեն, մերն արջին ասում են.

— Դե դու ել ոջախի առաջը պառկիր, արջ ախ-  
պեր, համ տաք կլինի տեղդ, համ քամուց պատը-  
պար:

Որը բացվում ե թե չե, արջը ել յետ ձնի մեջ  
քարշ գալով գնում ե գեպի անտառի խորքը. Են որ-  
վանից ես արջը սովորություն ե շինում, ամեն իրի-  
կուն միենուչն ժամին գալիս ե սրանց մոտ. Պառ-  
կում ե ոջախի առջն ու թողնում ե հետը խաղան,  
ինչքան կուղեն: Սրանք ել ենակն են սովորում, վոր  
իրիկունները, մինչև արջը տուն չի գալիս, գուրը  
փակում չեն:

Զմեռն անց ե կենում. գարունքն ընկնում ե, յեր-  
կիրը գալարում, ու մի որ ել արջը կուսերեսին ա-  
սում ե.

— Դե հիմի արդեն ժամանակն ե, վոր ձեզանից  
հեռանամ. ամբողջ ամառը ել ինձ չեք տեսնիլ:

— Ո՞ւր ես գնում, արջ ախպեր,—հարցնում ե  
կուսերեսը:

— Պետք ե անտառը գնամ, իմ գանձերն ու հարըս-  
տությունները չար թզուկներից պաշտպանեմ: Զմե-  
ռը գետնի սառած ժամանակը նրանք անհետանում  
են իրենց մթին այրերում, բայց արել յերկիրը տա-  
քացնում ե թե չե՝ եդ գող անպիտանները լուս աշ-  
խարհք են դուրս գալիս ու՝ ինչ վոր աչքները տես-  
նում ել տիրոջն ոգուտ չի անում, գողանում են  
տանում:

Արջից բաժանվելու համար շատ ե ախրում կու-  
սերեսիկը, իսկ յերբ գուռն առաջին բաց ե անում, վոր

գնա, հանկարծ արջն ընկնում ե դռան փակին, բըր-  
դիցը մի փունջ մնում ե փակի վրեն ու բրդի տակի-  
ցը վոսկու պես մի բան ե պսպղում: Յերեկի աչքիս  
թվաց, մտածում ե աղջիկն ու մտքիցը հանում ե ես  
բանը: Արջն ել շտապում ե գեպի անտառ ու անհե-  
տանում ե ծառերի յետեր:

Մի որ ել մերն աղջիկներին անտառն ե դրկում,  
վոր գնան ցախ ու մախ հավաքեն բերեն: Գնում են  
աղջիկները, ման են զալիս ման, մին ել տեսնում են  
անտառում ընկած մի ծառ, ու ես ծառի վրա, խոտե-  
րի միջին մի բան ես կողմն ե թոչում, են կողմն ե  
թոչում, բայց ինչ բան ե՝ գլխի չեն ընկնում: Մո-  
տենում են, տեսնում են մի թզուկ, գեմքը պառավ-  
կոտած, միրուքն ել սպիտակ ու յերկանը, յերկար: Են,  
վոր ասում են՝ ինքը թիզ ու կես, միրուքը գազ ու  
կես, հենց են ինքն ե, վոր կա: Միրքի ծերը մնա-  
ցել ե ծառի ձեղքում, գես ու գեն ե ընկ-  
նում ու չի իմանում, թե վոնց հանի: Աղջկերանցը  
վոր տեսնում ե, արնոտ աչքերը վրաները չոռւմ ե ու  
գոռում:

— Ի՞նչ եք տնկվել եղտեղ: Զեք կարող մոտ գալ  
ու ոգնել:

— Եդ ինչ ե պատահել, գաճաճ քեռի, — հարցնում  
ե վարդերեսը:

— Ապնւշ, անասնւն, հարցնում ե՝ ի՞նչ ե պատա-  
հել... Ի՞նչ պետք ե պատահեր. ուզում եյի ծառը ճը-  
ղեմ, մանը տաշեղներ անեմ մեր խոհանոցի համար,  
թե չե մեծ փետերից յերվում են մեր կերակուրները.  
մենք հո ենքան շատ չենք ուտում, ինչքան գուք, եդ  
կոպիտ ու անկշտում խալխող. — սեպը գարկեցի, հան-

16 Գրիմմ յեղբ. հեմիարները — 2

կարծ դուրս թռավ, ծառի ճեղքն ել ենպես արագ փակվեց, վոր վրա չհասցը միրքիս ծերը միջիցը հանեմ: Միրքիս ծերը մնաց ծառի ճեղքի մեջն, ու ահա ենպես չարչարվում եմ, չեմ կարում հանեմ, իսկ դուք կանգնել եք, բերաններդ բաց եք արել ու հրհում եք. ապուշներ, լպստածներ... թու, զահլես ինչպես ե գնում...

Աղջիկները վրա յեն գալի, ուժ են անում, քաշում են, քաշում են, չեն կարողանում թզուկի միբուքը ծառի ճեղքիցը հանեն:

— Կացեք, յես գնամ մարդիկ կանչեմ, — ասում ե վարդերեսը:

— Հիմարի գլուխ, — վրա յե պրծնում թզուկը. — Ինչ եմ անում մարդիկը: Դուք հերիք չեք, վոր զահլես գնա, գեռ ուրիշներին ել կանչեցեք: Կարող ե՞ք — մի ուրիշ բան ել հնարեցեք...

Լուսերեն ասում ե.

— Մի քիչ համբերիր, յես ճարը գտա: — Ասում ե, գրպանից մկրատ հանում ու թզուկի միրքի ծերիցը կտրում: Թզուկը աղատվում ե թե չե, իսկուն շաւակն ե ցցում իր վոսկով լիքը տոպարակը, վոր ծառի փշակումը պահել եր, ու գնում ե քթի տակին փընթալով.

— Ա՛յ քեզ անտաշ խալիս... յեկան ես փառավոր միրքիս ծերը կարեցին թողին: Գետինը մտնեք դուք, գետինը...

Եսպես մրթմրթալով տոպարակը շալակում ե, առանց հետ մտիկ տալու գնում:

Ես դեպքի վրա մի քանի ժամանակ անց ե կենում, մի որ ել աղջիկները գնում են ձուկը բռնելու:

Գետափին մոտենում են, տեսնում են ծղբիդի նման մի բան եստեղ յետ ու առաջ ե թոչկոտում ու քիչ ե մնում ջուրն ընկնի: Մոտ են վազում, տեսնում են իրենց ծանոթ թզուկը:


— Եղ լինչ ես անում եղտեղ, գաճաճ քեռի, — հարցնում ե վարդերեսը:

— Ապուշները, չեք տեսնում ինչ եմ անում... չեք տեսնում անիծած ձուկն ինձ ուզում ե ջուրը քաշի...

Դու մի ասիլ՝ թզուկը գետափին նստած կարթով ձուկը բռնելիս ե լինում, հանկարծ քամին փչում ե ու միրուքը փաթաթում կարթի թելին: Հենց եղ խառնված ժամանակը մի մեծ ձուկն ե ընկնում կարթի մեջն ու թզուկին զոռ ե անում, քաշում ե գեպի ներս: Սա գետափի թփերից ու խոտերից ե կըպշում, բայց բան չի գառնում, ձուկը տանում ե: Աղջիկները ժամանակին վրա յեն հասնում, իրեն պինդ բռնում են ու աշխատում են միրուքը թելից բաժանեն, չեն կարողանում, ենպես խճճված ե լինում իրար: Ել ուրիշ ճար չի մնում, մկրատը հանում են դարձյալ միրքից կտրում, իրեն աղատում: Աղատվում ե, տեսնում ե միրքիցը ելի կարել են՝ սկսում ե վրաները ճղճղալ.

— Ա՛յ գուք անասուններ, ես միթե կարգ ե, հ՞ւ Դուք համարձակվեք իմ յերեսն եսպես այլանդակել... Հիրիք չեր են որը միրքիս ծերը կտրեցիք, հիմի ել ամենալավ մասը տարաք, հ՞ը... Յես հիմի ինչպես մերոնց յերկամ... Ա՛յ գետինը մտնեք դուք, գետինը...

Վերցնում ե իր մարգարտով լիքը տոպարակը, վոր



թագցրել եր լեղեղնուտում, ուսովն և գցում ու անհետանում մոտիկ քարի յետկը:

Սրանից մի քանի որ հետո մերն իր աղջիկներին մոտակա քաղաքն և ուղարկում թել, ասեղ, մատնոց և ուրիշ ես տեսակ մանրուք առնելու: Մի քարքարոտ գաղտով անց կենալիս ևս աղջիկները նկատում են, վոր մի մեծ թոշուն ոդում պտուտ յեկավ, պտուտ յեկավ ու նետի նման ներքե ուղացավ, զարկեց մի քարի տակի: Թոչունի զարկելուն պես մի սրտաճմիկ աղաղակ ե բարձրանում, ու ես ձենի վրա աղջիկները վազում են, տեսնում են իրենց հին ծանոթ թղուկը. արծիվը ճանկել ե, ուղում ե տանի: Բարեսիրտ աղջիկները իսկույն բռնում են թղուկից ու կախ ընկնում, ու ենքան են արծիվի հետ ես կողմն են կողմն ընկնում, ենքան են կոփվ տալիս, մինչև վոր արծիվը վորսը թողնում ե, թոչում գնում: Առաջին սարսափն անց ե կենում թե չե, ես թղուկը նորից իր ճղճղան ձենովը աղջիկներին վրա յե պրծնում:

— Ես ի՞նչ արիք. չեյիք կարող ակելի քնքուց ժամ գալ. հ՞ը... բարակ շորերս պատառոտեցիք թողիք... անձունի անպիտաններ...

Ճղճղում ե, անգին քարերով լիքը տոպրակը ուսը գցում ու անցնում ե քարերի յետեր, կորչում գնում իր քարանձավը: Աղջիկներն արգեն սովոր են լինում նրա ապերախտությանը, շարունակում են իրենց ճամփեն, քաղաքում իրենց առուտուրն անում են ու հետ վերադառնում: Վերադարձին գալիս են դարձալ պատահում հանդում մի աեղ նստած թղուկին: Տեսնում են մի իստակ տեղ իր տոպրակը շուռ ե. տվել, թա-

փել, կիտել անգին քարերը, մտածելով, թե ենպեւ  
ուշ ել անց կենող ու տեսնող չի լինիլ Վերջալուսին  
շողքերն ընկել են փայլուն քարերի վրա, ու գույնը՝  
գույն քարերն ենպես են փառվում, շողշողում, հուր-  
հուրածին տալի, վոր աղջիկները տեղները մարում  
են, մնում հայիլ-մայիլ կտրած՝ մտիկ անելիս:

— Ի՞նչ եք բերաններդ բաց արել կանգնել, — զու-  
ում ե թզուկը, ու նրա գորշ գեմքը փոխվում ե ծի-  
րանի գույնի: Ուզում ե, ինչքան վոր կարող ե մի  
հայիոցի, մին ել հանկարծ մի մոնչոց ե լսվում, ու  
անտառից մի արջ ե գուրս վազում, հարձակվում վրեն:  
Սարսափահար թզուկը տեղիցը վեր ե ցատկում, բայց  
մինչև վրա կհասցներ մտնի իր խորշը՝ արջը բռնում  
ե: Զարհուրած սկսում ե աղաչել.

✓ — Իմ սիրելի, իմ տեր արջուկ, առ, ահա քեզ լի-  
նեն իմ բոլոր գանձերը, միայն թե խնալիր ինձ:  
Մտիկ առուր, մի տես, թե ինչ շքեղ անգին քարեր-  
են եստեղ թափված: Ինձ բաշխիր իմ կյանքը: Ի՞նչ  
ոգուտ ես տանելու, յեթե սպանես ինձ, եսպես մի  
փոքրիկ, վտիտ արարածի: Ատամիդ տակին իսկի չեմ  
ել յերեալ: Այս, թե ուզում ես ուտես՝ ես անորեն  
աղջիկներին կեր, հասկանում եմ. լորի պես զեր ու  
թխիկ — անուշ պատառ են... սրանց կեր, քեզ անուշ-

ինք...  
Արջը ականջ ել չի դնում, թե ինչ ե ասում թը-  
զուկը, ծանը թաթը յետ ե տանում ու վոր մի զարկ  
ե հասցնում՝ թզուկս տեղն ու տեղը հանգչում ե, աղ-  
ջիկները լեղապատառ սկսում են փախչել: Արջը յե-  
տեներից կանչում ե.

— Լուսիկ, վարդներ, մի՛ վախենաք, սպասեցեք,  
յես ել եմ ձեզ հետ գալիս:

Արջիկները ճանաչում են, վոր ես իրենց սիրելի  
արջի ձենն ե, կանգնում են: Արջը մոտենում ե նը-  
րանց, ու հանկարծ մորթին վրիցն ընկնում ե, տա-  
կիցը դուրս ե գալիս մի գեղեցիկ պատանի՝ վոտից  
գլուխ վուկու մեջ կորած:

— Յես թագավորի տղա յեմ, — ասում ե նա: — Ես  
անսիրտ թզուկը ինձ գագան եր շինել ու հափշտակել  
իմ բոլոր գանձերը: Յեկ յես դատապարտված եյի  
անտառներում թափառելու մինչեւ սրա մահը: Ահա  
վերջապես սա առավ իրեն արժանի պատիժը, իսկ յես  
իմ առաջիկան պատկերը:

Եստեղից գնում՝ առնում են անհուն գանձերը,  
վոր գիզել եր թզուկը իր մթին քարանձավում: Ապա  
թե թագավորի տղեն ամուսնանում ե Լուսերեսի հետ,  
իսկ յեղբայրը՝ Վարդերեսի: Հետներն առնում են և  
աղջիկների պառավ մորը, գնում յետ իրենց աշխարհ-  
քը, ապրում են ուրախ ու յերջանիկ: Ու սրանցից  
մեկի լուսամուտի տակ սպիտակ վարդի թուփն ե ծաղ-  
կում, մյուսի լուսամուտի տակ՝ կարմիր վարդի  
թուփը:

(1914)





## ՍԱԳԱՐԱԾ ԱՂՋԻԿԸ

Լինում ե չի լինում մի պառավ, շատ պառավ կին։  
Ես պառավի իր սագերի հետ ապրելիս ե լինում ան-  
մարդաբնակ լեռների մեջ՝ մի փոքրիկ տնակում։  
Բնակտեղն ել չորս կողմից շրջապատված ե լինում  
անտառով, ու պառավի ամեն որ իր ձեռնափետը վերց-  
նում ե, ձեռնափետին հենված տմբամբալով գնում  
անտառը։ Գնում ե սագերի համար խոտ ե տանում,  
պտուղ ե քաղում, հավաքում ե՝ ինչի վոր ձեռքը հաս-  
նում ե ու շալակում ե բերում տուն։ Տեսնողն ա-  
սում ե՝ հիմի վորտեղ վոր ե, խեղճ պառավի իր բե-  
ռան տակին կը ճկոի, բայց միշտ ել հաջողակ տուն ե

հասցնում։ Ճամփին ել, բան ե, յեթե մարդ ե պատա-  
հում, ուրախ-ուրախ բարեռում ե.

— Բարի որ, ախպեր ջան։ Տեսնոնում ես եսոր յե-  
ղանակն ինչ լավ ե։ Հօր, չլինի՞ թե զարմանում ես,  
վոր պառավ տեղովս եսքան շալակը տանում եմ։ Ի՞նչ  
անենք, ամեն մարդ պետք ե իրեն բեռը կրի։

Սակայն մարդիկ չեյին ուղում նրան պատահեն։  
Պատահելիս ել ճամփաները ծոռում եյին, հեռվից անց  
կենում։ Իսկ յեթե հեր ու վորդի միասին կողքով  
անց կենալիս եյին լինում հերը վորդուն կամաց ըզ-  
գուշոցնում եր. «Տեսնոնում ես սրան. սրանից հեռու  
կաց հա. սա կախարդ ե...»։

Մի առավոտ ել ես անտառով մի գեղեցիկ յերի-  
տասարդ ե լինում անց կենալիս։ Արել վառ ու պայ-  
ծառ լուսավորում ե, թուչունները ծլվլում, յերգում  
են, զայ հովը զըլզըլում ե, ոլուղում ե տերևներում։  
Ու անցնում ե յերիտասարդն ուրախ, զվարթ։ Ճամ-  
փին ինս-ջինս, մարդ չի պատահում։ Մին ել տեսնում  
ե մի պառավ, ծառերի տակին չոքած, մանդաղով խոտ  
ե անում։ Թոգնոցը լիքը խոտն ու յերկու զամբյուղն  
ել կողքին դրած։

— Եղ վինց ես եղքանը տանելու, նանի, — հալց-  
նում ե յերիտասարդը։

— Ուզեմ-չուզեմ՝ պետք ե տանեմ, վորդի ջան,  
ինչ անեմ, հարուստներն, իհարկե, կարող են եսպես  
բան չանեն, բայց գյուղացու համար ասված ե.

«Յետ մի նայիլ նոր,

Մեջքդ վաղ ե կոր...»

Ու, յերբ տեսնում ե յերիտասարդը մնաց կողքին  
կանգնած, ասում ե.

— Հ՞ը, գուցե կկամենաս ինձ ոգնել, Մեջքդ դեռուղիղ ե, ծնկներդ առողի, քեզ համար մի մեծ բան չի սա: Իմ տնակն ել եստեղից ենքան հեռու չի. այս սարի յետեկի հովտումն եւ Զեռաց կհասնենք:

Յերիտասարդը մեղքանում ե պառավին:

— Թեև,—ասում ե,—ի հերը գյուղացի չի, հարուստ իշխանի վորդի յեմ, բայց քո շալակը կվերցնեմ, վոր ցույց տամ, թե մենակ գյուղացին չի ընդունակ ծանր բեռը կրելու:

— Դե արի վեր կալ, հենց ապրես: Յեղած չեղածը մի ժամփա ճանապարհ ե, քեզ համար դատարկ բան ե: Հա, չմոռանաս, ես խնձորն ու տանձն ել հետը:

Յերիտասարդ իշխանը «մի ժամփա ճանապարհ» անունը վոր լսում ե, սկսում ե տատանվել, բայց պառափն ոճիքը բաց չի թողնում: Խոտի կապոցը շալակն ե տալի, տանձ ու խնձորի զամբյուղներն ել ձեռը:

— Տեսնում ես ինչ թեթև ե:

— Վարտեղից ե թեթև,—անքում ե յերիտասարդը: Կապոցդ ենքան ծանր ե, վոր կարծես թե քար լինի մեջը լցրած, իսկ տանձ ու խնձորի զամբյուղները արձընի նման կռներս պոկում են... Շունչս կտրում ե...

Ուզում ե վեր դցի՝ պառավը չի թողնում հեգնում ե, ասում ե:

— Տեսեք, տեսեք յես իմ պառավ տեղովը միշտ մենակ տանում եմ, սա ջահել մարդ ե, չի կարողանում... Եղանես ե, բանը վոր լեզվի գա—կարիճ եք, իսկ գոր գալիս—հետ-հետ եք գնում: Ել լինչ ես կանգնել: Վոտներդ ժաժ տուր՝ գնանք: Միւնույն ե, եղ բեռն ել վոչով քո ձեռիցն առնելու չի:

Քանի դեռ հարթ ճամփով են գնում, ելի վոչինչ բայց վոր դեմ են ընկնում սարերին, քարերն ել վոտքի տակիցը դուրս են պրծնում՝ իրար յետեկցներքե թոչում, տեսնում ե, վոր ես արդեն ուժիցը վեր ե: Քրտինքը ճակատը կոխում ե, ու, մին սառը, մին տաք՝ մեջքից հոսում:

Աղաջում ե, ասում ե.

— Նանի, ել չեմ կարողանում գնամ, — պիտի մի քիչ շունչ առնեմ:

— Վոչինչ, — պատասխանում ե պառավը, — յերքոր տեղ կհասնես—կհանգստանաս: Ով դիտի, կարելի յե մի որ սրանից քեզ համար մի լավ բան ե դուրս գալի... Գնա...»


— Դու իսկի խղճմտանք չես ունեցել, այ պառավ, — բարկանում ե յերիտասարդը և ուզում ե շալակը մեջքից գցի, բայց վրտեղից կապցն ենպես ե մեջքին կալել, վոնց վոր թե հետը ծնված լինի: Դես ե շուռ գալիս, դեն ե պատվում, իրեն թափահարում, չի լինում, չի ազատվում: Իսկ պառավը վրեն ծիծաղում ե ու, իր կեռ ձեռնափետը ձեռին, ես կողմն, ես կողմն ե թոչկոտում:

— Ինչու յես եղան բարկանում, տղա ջան. հենց կարմրել ես, կասես հնդու հավ լինես: Հանգիստ բեռդ տաք. մի տուն հասնենք, յես գիտեմ՝ քեզ ինչ պես կվարձատընեմ:

Ինչ պետք ե աներ խեղճ յերիտասարդը: Ուզերչուզեր պետք ե հնազանդվեր իր ճակատագրին ու քարը գար պառավի յետեկց:

Պառավն ել՝ քանի գնում են՝ ենքան ժրանում ե ու արագանում, իսկ իր բեռն ավելի ու ավելի ծան-

բանում: Վերջը մի տեղ ել հանկարծ ես պառավը  
թռչում ե կապոցի վրա ու պինդ նստում յերիտասար-



Դի շալակին: Ինքն ել թեև չոր չոփի նման, բայց

մի հաստ ու կոպիտ գյուղացի կնկանից ավելի ծանր ել լինում: Յերիտասարդի ծնկները դողդողում են, բայց հենց կանգնում ե թե չե՝ պառավը ճիպոտով կամ յեղինջով սկսում ե վոտներին զարկել ու զարկել: Այս ու վոխով, թառանչ քաշելով մինչև սարն ե բարձրանում, ենտեղից ել հանում պառավի տունը, քիչ ե մնում տեղն ու տեղն ընկնի, հոգին տա:

Սագերը, վոր պառավին տեսնում են, թեերը թափահարելով, շլինքները յերկարացրած, ուրախուրախ աղմկելով վազում են դեմք, իսկ սագերի յետերց ճիպոտը ձեռին մի պառավ կին ե գալիս, ինքը պնդակաղմ ու բարձրահասակ, բայց սաստիկ այլանդակ ու ու անձոռնի:

Գալիս ե ու—մայրիկ,—ասում ե,—ի՞նչ պատահեց քեզ, վոր եսքան ուշացար:

— Վոչինչ, աղջիկս,—պատասխանում ե պառավը,— ինձ վոչ մի վատ բան չի պատահել: Ընդհակառակը, անտառում պատահեցի ես յերիտասարդ պարոնին, վոր իմ տեղակ իմ բեռը շալակեց բերեց: Եդ հերիք չեր, յերբոր յես հոգնեցի, ինձ ել զոռով շալակն առավ: Ճամփեն ել ենքան կարճ թվաց, վոր չիմացանք ինչպես յեկանք: Շարունակ ծիծաղում եյինք ու իրար հետ հանաքներ եյինք անում:

Վերջապես պառավն ես տղի շալակից իջնում ե, մեջքից կապոցն առնում, ձեռքերից զամբյուղները ու փաղաքուշ վրեն նայելով ասում:

— Դե հիմի նստիր եստեղ շեմքում, հանգստացիր: Դու քո աշխատանքով պարզեի արժանացար ու եդ պարզել յես քեզ կտամ:

Հետո դառնում ե սագարած աղջկանը.

— Դու գնա տուն, աղջիկս, ջահել տղի մոտ կանգ-  
նել ես, լավ չի: Կրակի վրա յուղ չեն ածիլ: Պարոնը  
հանկարծ վրեդ կրիմահարվի:

Պարոնը ես վոր լսում ե, չի իմանում ինչ անի,  
լաց լինի թե ծիծաղի: Մտքումն ասում ե.

— Ա' քեզ գեղեցկուհի.—սա թեկուզ յերեսուն  
տարով ել ջահելանա, դարձյալ չի կարող իմ սիրալ  
շարժել, ուր մնաց հիմի:

Այնինչ պառավը փայտում, փայտայում եր իր սա-  
գերին, վոնց վոր թե իր յերեխեքը լինեյին, ու հե-  
տո աղջկա հետ մատում են տնակը:

Հոգնած յերիտասարդը ձգվում ե վայրի խնձորե-  
նու տակի նստարանի վրա: Ողը ջերմ ու բուրավետ:  
Չորս կողմը տարածվում ե ընդարձակ դալար մար-  
դագետինը՝ լիքը կապուտ ու դեղին ծաղիկներով:  
Մարգագետնի միջով, արկի տակ արծաթի պես պլո-  
պըղալով, վազում ե վճիռ առվակը, մեջը գնում են  
գալիս ճերմակ սագերն ու ճըղփում, լողանում:

— Ի՞նչ լավ տեղ ե, —բացականչում ե յերիտա-  
սարդը:—Բայց ենքան հոգնել եմ, վոր աչքերս կու-  
են գնում: Պառկեմ աչքս մի քիչ կպցնեմ. են ել չըլի-  
նի թե քնած տեղս քամին վոտներս տանի. ենպես  
ուժից ընկել են, կարծես բամբակից լինեն:

Մի քիչ քնում ե, պառավը գալիս ե, հրում զար-  
թեցնում: Ասում ե.

— Վեր կաց, չի կարելի վոր դու եստեղ մնաս:  
Ճշմարիտ ե, յես քեզ բավական չարչարեցի, բայց հո-  
ելի կաս ու կենդանի յես: Հիմի քեզ կվարձատրեմ:  
Յեթե փող տամ քեզ կամ մի ուրիշ գանձ, վոչ փողի  
կարիք ունես, վոչ ուրիշ գանձի. դրա համար ել քեզ

մի բան կտամ, վոր փողից ել ե թանգ, գանձից ել:  
Ասում ե ու ձեռը տալիս մի փոքրիկ արկղ՝ ամ-  
բողջը զմբուխտից:

— Ա' ո, պահիր քո աչքի լուսի պես, և սա քեզ  
յերջանկություն կրերի:

Յերիտասարդ իշխանը հանկարծ իրեն ուժեղ ու  
կացառ ե զգում. տեղից վեր ե կենում, նվերն առ-  
նում, շնորհակալություն ե անում պառավին ու ձա-  
նապարհ ե ընկնում առանց մտիկ տալու պառավի աղ-  
ջկա վրա: Ճանապարհից բավական կտրել եր, դեռ  
յետերից լսվում եք սագերի ուրախ ճղճղոցը:»

Յերեք որ ամայության մեջ մոլորված թափառե-  
լուց հետո յերիտասարդը գուրս ե գալիս մի մեծ քա-  
ղաք: Ինքը քաղաքին անծանոթ, քաղաքն իրեն: Ան-  
ծանոթ նորեկին առնում են տանում եդ քաղաքի թա-  
գավորի պալատը: Պալատում յերիտասարդը ծնկի յե-  
գալիս, յերկրպագություն ե անում թագավորին, ապա  
գրպանից հանում ե պառավի տված զմբուխտյա արկ-  
ղիկն ու գնում ե թագուհու վոտների տակ: Թագու-  
հին հրամայում ե վեր կենա՝ իր ձեռքովը տա թան-  
կագին նվերը: Թագուհին բաց ե անում արկղիկը, մե-  
ջը նայում, նայելն ու ուշաթափ գետնովը դիպչելը  
մին ե լինում: Պալատականներն իսկուն վրա յեն  
թափվում յերիտասարդին բռնում են, վոր բանաը տա-  
նեն, թագուհին աչքը բաց ե անում, ուշըի յե գալիս,  
հրամայում ե ազատ թողնեն ու իրենք բոլորը գուրս

գնան, վոր ինքը ուղում ե նրա հետ մենակ խոսի:  
Մենակ են մնում թե չե, թագուհին սկսում ե լաց  
լինել ու լաց լինելով եսպես ե խոսում յերիտասարդի  
հետ.

— Ինչի՞ս համար են ևս փառքն ու փայլը, յերբ  
ամեն առավոտ վեր եմ կենում արտասուքով ու ա-  
մեն իրիկուն պառկում եմ արտասուքով։ Յես յերեք  
աղջիկ ունեցի։ Փոքր աղջիկս ենքան եր սիրուն, վոր  
տեսնողն ասում եր՝ աղջիկ չի սա—հրաշք ե։ Զյունի  
ճերմակն ու խնձորի ծաղկի կարմիրն իրար ելին  
խառնված նրա այտերին, իսկ մաղերը փայլում եյին  
արեի ճառագայթների նման։ Արտասվելիս աչքերից  
արտասուքի տեղակ ակն ու մարդարիս եր թափում։  
Տամնուհինք տարին վոր լըացավ՝ հերը յերեք աղջե-  
կանն ել կանչեց իրեն մոտ։ Տեսնելու բան եր, թե  
ինչպես ամենքն ել հիացմունքից աչքները չուցին,  
յերբ ներս մտավ փոքր աղջիկս։ Հենց իմանաս յեր-  
կընքից արև դուրս յեկավ։

— Զավակներս, — ասավ թագավորը, — չեմ իմանում  
թե յերբ կամ ինչ ժամանակ կհասնի իմ վերջին որը,  
կը ամամար ել ուղում եմ հենց ես որվանից վորոշել,  
թե ինչ բաժին եք ստանալու ամեն մեկդ իմ մահից  
հետո։ Գիտեմ, վոր ամենքդ ել սիրում եք ինձ, բայց  
ձեզանից վորն ավելի շատ ե սիրում, նա ել ամենից  
մեծ բաժինը կստանա։ Ասացեք տեսնեմ, ամեն մեկդ  
ինչքան եք սիրում ինձ, վոր ձեր խոսքերով կարո-  
ղանամ ձեր սերը չափել։

Մեծն ասավ.

— Յես քեզ սիրում եմ ամենաքաղցր շաքարի  
չափ։

— Միջնեկն ասավ.

— Յես քեզ սիրում եմ իմ ամենալավ զգեստի  
չափ։

Փոքրը լուռ եր։



Թագավորը հարցը եց.

— Իսկ դու, իմ ամենասիրելի աղջիկս, դու ինչ-քան ես սիրում ինձ:

— Զգիտեմ հայրիկ, —պատասխանեց աղջիկը, —վոչ մի բանի հետ չեմ կարողանում համեմատել իմ սերը:

Բայց հերն ստիպեց, վոր նա մի բան ասի. Են ժամանակ աղջիկն ասավ.

— Ամենալավ կերակուրն ել ինձ համար համ չու-նի առանց աղի. յեզ քեզ սիրում եմ աղի չափ:

Թագավորն ես վոր լսեց՝ կատաղությունը բռնեց ու գոռաց.

— Եղանակ... յեթե դու ինձ աղի չափ ես սիրում, քո սիրո վարձատրությունն ել կլինի աղ:

Իր թագավորությունը բաժանեց յերկու մեծ ա-ջիկների մեջ, իսկ փոքրի մեջքին հրամայեց մի տոպ-րակ աղ կապեն ու տվեց յերկու ծառայի, վոր տանեն-բաց թողնեն մի վայրենի խոր անտառում: Ամենքս նրա համար խնդրեցինք, աղաչեցինք, պաղատեցինք, բայց չեղավ, չկարողացանք մեղմել թագավորի ցա-սումը:

Այս, յեթե տեսնեիք, թե ինչպես եր լաց լինում մեղանից բաժանվելիս: Ամբողջ ճանապարհը շաղ եր անցած են մարդարիտներով, վոր արցունքի տեղակ թափվում եյին նրա աչքերից: Սրանից հետո շուտով թագավորը զղաց իր խստասրտության վրա, բարկու-թյունն անցավ, փոխվեց գութի ու խղճահարության. հրամայեց ամեն տեղ վորոնեն, գտնեն մեր դժբախտ յերեխային, բայց վոչով չկարողացավ գտնի: Ամեն անգամ յերբ մտքովս անց ե կենում, թե նրան կե-

րած կլինեն վայրենի գաղանները, ցավից ու վշտից տեղս կորցնում եմ, չեմ իմանում, թե վորտեղ եմ: Շատ անգամ ել ինձ միիթարում եմ են հուսով, թե նա կենդանի յե դեռ և թագնվել ե մի վորեն քարան-ձավում կամ ապաստան ե գտել գթասիրտ մարդկանց մոտ: Հիմի բաց եմ անում ձեր տված դմբուխտա-րկղիկն ու հանկարծ տեսնում եմ մեջը են մարդա-րիտներից, վոր արցունքի տեղակ թափվում եյին իմ աղջկա աչքերից...

— Դուք պետք ե ինձ պատմեք—ես մարդարիտը վորտեղից ե ընկել ձեր ձեռքը:

Յերիտասարդը պատմում ե, թե՝ ես մարդարիտն ստացել եմ մի ես տեսակ պառավից, վոր անշուշտ կախարդ պիտի լիներ, ու ինձ ել շատ չարչարեց, բայց եղանակ մի աղջիկ վոչ տեսել եմ, վոչ ել դրա մա-սին մի վորեն բան եմ լսած:

Եստեղ թագավորն ու թագուհին վճռում են՝ ին ուզում ե լինի՝ գտնեն պառավին: Ասում ե՝ վորտեղ ես մարդարիտը գտնվել ե, ենտեղ ել կարելի յե մի տեղեկություն իմանալ իրենց աղջկանից:

Սրանց թողնենք իրենց ճամփեն գնան, մենք դառնանք պառավին ու իր աղջկանը:

Պառավի իր տնակի լուրթյան մեջ իլիկ եր մանում: Մութն ընկել եր, ոջախի կողքին երվող մարիսը մա-րելու վրա յերև չանկարծ դուրսը աղմուկ բարձրացավ. սագերը հանդից տուն ելին վերադառնում, ու հեռվից լսվում եր նրանց խոր ճղճոցը: Մի քիչ անց՝ ներս մտավ պառավի աղջիկը: Մերը մի թեթև գլխով արավ: Աղջիկը մոր կողքին նստեց, իլիկն առավ ու սկսեց թել մանել, ենպես աշխուժ, ինչպես մի ջահել աղջիկը:

Եսպես լուռ մի յերկու ժամ նստեցին՝ առանց մինը  
կամ մյուսը լեզուն պոռունգովը տալու. Վերջապես  
լուսամուտից մի շրջուն լսվեց ու մթնից ներս նա-  
ցեցին մի զույդ կըակոտ աչքեր: Մի պառավ բու յեր,  
վոր յերեք անդամ կանչեց, բնւ-բնւ, բնւ-բնւ, բնւ-  
ու կորավ:

Պառավը գլուխը մի փոքր բարձրացրեց ու ասավ.  
— Ժամն յեկավ, աղջիկս, գնա արա ինչ վոր անե-  
լու լես:

Աղջիկը լուռ կացավ դուրս գնաց: Գնաց, գնաց,  
դուրս յեկավ մի հովիտ ու հասավ մի ջրհորի, վորի  
կողքին յերեք կաղնի ծառ եյին կանգնած:

Լրացած աճագին լուսինն ել գուրս յեկավ սարերի  
գլխին ու ենպես լուս արավ, վոր ասեղ լիներ կորած,  
մարդ կնկատեր: Լուսնի լուսի տակ աղջիկը հանեց իր  
հագի խորիս, ջրհորի վրա կռացավ ու սկսեց լվացվել:  
Հետո խորիս ջուրը քաշեց ու փռեց, վոր սպիտակի  
լուսնի լուսի տակ: Յեկ միանգամից ինչպես փոխվեց  
են այլանդակ աղջիկը: Դուրս յեկավ կանգնեց մի  
անտես-անման գեղեցկուհի, վոր վոչ ուտես, վոչ  
խմես, կանգնես ու թամաշա անես: Ճերմակ մազերը  
գլխիցն ընկան թե չե՛նրանց տակից ճոխ վոսկե մա-  
զերը ենպես վերեկց ներքե թափվեցին, վոնց վոր  
իրձնով արեի շողքերը թափվեն, ու մարմինը պատե-  
ցին: Մազերի տակից աչքերը փայլում եյին ջուխտ  
աստղի նման ու այտերը վառվուռ եյին կարմիր  
ինձորի ծաղկի պես:

Բայց ինքը տխուր-տխուր: Գետին ընկավ ու  
սկսեց աղի-աղի լաց լինել: Աչքերից արտասուքներն  
իրար յետեից թափվում եյին գետին: Եսպես նստած

լաց եր լինում, ու յերկար կմնար ես դրության մեջ,  
յեթե հանկարծ մոտակա ծառերից մի խշիցոց չլսվեր  
ու հետն ել մի չըտկոց: Հրացանի ձեն լսած յեղնիկի  
նման տեղիցը ծլունդ յեղավ. իսկույն մտավ իր հին  
խորխի մեջ ու մի ակնթարթում չքացավ, տեղն ու  
տեղը հանգավ, վոնց վոր ճրագին փչես՝ հանգի:  
Տերեկի նման դողալով հասավ իրենց տնակը: Տեսավ  
մերը շեմքում կանգնած սպասում ե: Ուղեց պատմի,  
պառավը մեղմորեն ասավ.

— Լավ, լավ, աղջիկս, յես ամեն բան գիտեմ:—  
Ասավ, ներս տարավ, մարխը վառեց ու մանածը թո-  
ղած՝ ավելն առավ, սկսեց տնակն ավել:

— Ամեն բան իստակ ու մաքուր պետք ել լինի:  
— Նանի, ես գիշերվա կիսին ինչո՞ւ յես տունը  
վեր քաղում: Մարդ պետք ե գա, ինչ ե:

— Գիտեմ վոր ժամն ե, աղջիկս,— հարցրեց պա-  
ռավը:

— Դեռ գիշերվա կեսը չկա, բայց մոտիկ ե:  
— Իսկ մտքովդ չանցավ, վոր սրանից յերեք տա-  
րի առաջ մին ել եսոր ես յեկել դու ինձ մոտ: Հիմի  
ես գիշեր ժամանակը լրացավ, ու մենք ել միասին  
ապրել չենք կարող:

Աղջիկը գունատված հարցրեց.  
— Նանի ջան միթե ուղում ես ինձ դուրս անես  
քո տնից: Ո՞ւր գնամ յես: Վոչ բարեկամ ունեմ, վոչ  
տեղ, ո՞ւմ մոտ գնամ: Ինչ ասում ես՝ անում եմ, դու  
ել գոհ ես ինձանից, ել ինչո՞ւ յես դուրս անում...

Պառավը չեր ուղում ամեն բան պարզի, թե ինչ  
եր պատահելու աղջկա հետ, ու խոսքը փոխեց:

— Ել ես խրճիթում չեմ ապրելու, ուղում եմ հե-

աանամ ու հեռանալիս մաքուր թողնեմ, թող սրբեմ:  
Քեզ համար ել դարդ մի անի, ել յետ կտանես քո  
հորական ոջախը ու գոհ կլինես են վարձով, վոր յես  
կտամ:

— Բայց, նանի, ինչ ե պատահելու ինձ հետ,—  
Կրկին հարցրեց աղջիկը:

— Մին ել եմ ասում. ինձ մի խանգարի, թող  
սրբեմ: Անխոս գնա քո սենյակը, խորխտ հանիր ու  
հագիր քո ես մետաքսե զգեստը, վոր հագիր եր, յերք  
առաջին անգամ յեկար ինձ մոտ: Հագիր ու սպասիր  
քո սենյակում մինչև կկանչեմ:

Հիմի թագավորից ու թագուհուց տանք տեղեկու-  
թյուն:

Թագավորն ու թագուհին յերիտասարդ իշխանին  
հետները առնում են ու ճանապարհ են ընկնում,  
գնում են պառավին գտնեն:

Յերիտասարդը մի անտառում նրանցից յիտ ե մնում  
ու պետք ե ճանապարհը մենակ շարունակեր: Մյուս  
որը նրան թվում ե, թե ուղիղ ճանապարհն ե դուրս  
յեկել: Գնում ե, գնում ե, մի տեղ մութը վրա յե  
հասնում, բարձրանում ե մի ծառի, ուզում ե ծառի  
վրա գիշերի, առավոտը վեր կենա ել յետիր ճամփեն  
շարունակի: Դիշերվա մի ժամին լրացած լուսնյակը  
վոր դուրս ե գալի, նկատվում ե, վոր մի պառավ  
լեռներից իջնում ե ցած: Նկատում ե, վոր ճիպոտը  
ձեռին չի, բայց ես են սպարած աղջիկն ե, վոր տեսել  
եր պառավի անակում:

— Ոհո,—բացականչում ե ինքն իրեն,—ահա մինը  
յեկավ: Ես մինը վոր ձեռս ընկավ, են մյուսն ել չի  
պըծնի ինձանից:

Բայց ինչքան ե զարմանում, յերբ այլանդակ կի-  
նը մոտենում ե ջրհորին խորխը հանում ե, լվացվում,  
վոսկե մաղերը թափվում են ուսերին, ու առջել  
կանգնում ե մի գեղեցկուհի, վոր իր որում վոչ տե-  
սել եր, վոչ լսել: Շունչն իրեն պահած՝ գլուխը ճյու-  
ղերի արանքից հանում ե ու աչքերը հառած նայում  
ե աղջկանը: Շատ ե լինում դեպի առաջ հակված թե  
ինչ, ծառի մի ճյուղը կոտրում ե: վոր կոտրում ե՝  
աղջիկն խկույն ել յետ մանում ե իր խորխը ու յեղ-  
նիկի նման թռչում, կորչում:

Աղջիկը հեռանում ե թե չե, յերիտասարդն ել ծա-  
ռից իջնում ե, ընկնում յետեկից: Շատ ե գնում թե  
քիչ, մին ել տեսնում ե՝ մի տեղ առաջին յերկու  
ստվեր են թափառում: Դու մի ասի՝ թագավորն ու  
թագուհին են: Հեռվից պառավի մարխի լույսը նշմա-  
րել են, են լուսի վրա գնում են: Յերիտասարդը  
պատմում ե նրանց ջրհորի մոտ իր աչքով տեսած  
հրաշքը, ու ել վոչ մի կասկած չի մնում, վոր են աղ-  
ջիկը իրենց վորոնած աղջիկը պիտի լինի: Յերկուսը  
դառնում են յերեք ու գնում: Գնում են, գնում, հաս-  
նում են պառավի տնակին: Տեսնում են սագերը պա-  
ռավի տնակի չորս կողմը բռնած, գլուխները թերի  
տակ կոխած՝ քնած են: Վոչ մինը վոչ շարժվում ե,  
վոչ ձեն ե հանում: Լուսամուտեցը ներս են նայում.  
տեսնում են՝ ներսը պառավը նստած իրեն համար  
իլիկ ե մանում: Տունն ել ենքան մաքուր սրբած, վեր  
քաղած, հենց իմանաս մեջը հուրիւիկիներ եյին  
ապրում, վոր չգիտեն աղքն ու փոշին ինչ բան ե: Ես  
ամենը տեսնում են, բայց իրենց աղջկանը չեն տես-  
նում: Զկա: Մի առժամանակ եսպես մտիկ են անում,

վերջը սիրտները պնդացնում են, լուսամուտը կամաց ծեծում են, Պառավը կարծես թե հենց սրանց սպասելիս լիներ. տեղիցը վեր և կենում ու քաղցր ձեն տալի.

— Յեկեք, ներս յեկեք, յես ձեզ ճանաչում եմ: Ներս են մտնում թե չե՝ ասում ե.

— Թագավորն ապրած կենա, գուք հո եսոր ստիպված չեյք լինիլ եսքան յերկար ճանապարհ կտրելու, յեթե յերեք տարի առաջ ձեր սիրուն ու բարի աղջը կանը, չգիտեմ ինչի համար, ենքան անիրավ կերպով դուրս չանեցիք ձեր տանից: Են ել են աղջկանը, վոր ենքան սիրուս եր ձեզ: Ասենք դրանից նրան վոչ մի ժամանակ: Ես յերեք տարին, ճշմարիտ ե, նա սադեր արածեցնում, բայց վոչ մի վատ բան չի ոռվորել ու իր մաքուր սիրու պահել և անարատ: Բայց գուք ձեր արժանի պատիժն առաք հենց են ան ու դողով, վորով ապրում եյք ես յերեք տարին:

Ապա մոտենում ե կողքի դուանն ու կանչում.

— Դուրս արի, աղջիկ ջան:

Դուռը յետ և բացվում, մետաքսե զգեստը հագին հայտնվում ե թագավորի աղջիկը, վոսկի մազերը արձակ թափված ուսերին ու թիկունքին, աչքերը ցոլուն սատղեր ու ինքն ամբողջ կարծես թե հրեշտակ եր, վոր յերկիր իջավ:

Դուրս ե գալիս, վազում ե ընկնում հորն ու մոր վզով ու սկսում ե համբուրել: Հերն ու մերը ուրախությունից լաց են լինում, իսկ յերիտասարդ իշխանը մնում ե ապուշ կանգնած նրանց կողքին: Աղջիկը նրան նկատում ե թե չե, ինքն ել չի իմանում ինչուր

կարմրում ե, կարմիր վարդ և կարում: Թագավորն ասում ե.

— Աղջիկ ջան, իմ թագավորությունն արդեն բաժանել եմ, հիմի ի՞նչ տամ քեզ:

— Սրան վոչ մի բան չի հարկավոր,—աղջկա տեղակ պատասխանում ե պառավը:—Յես ձեզ եմ նվիրում սրա են արտասուքները, վոր թափել ե ձեզ համար. սրանք մաքուր մարգարիտներ են, ավելի մաքուր ու թանգ, քան են մարգարիտները, վոր հանում են ծովերից, և ավելի արժեն, քան ձեր ամբողջ թագավորությունը: Իսկ իրեն, ինձ արած ծառայության համար, նվիրում եմ իմ տնակը:

Պառավի ես ասելն ու անհետանալը մին ե լինում: Մին ել են տեսնում տնակի պատերը ճոճուցին. նայում են՝ տնակը դարձել ե մի շքեղ պալատ, թագավորավայել սեղանները բաց արած, բազմաթիվ ծառաները վազում են դես ու դեն, ու մերմակազգեստ ջանել աղջիկները շրջապատել են իրենց:

Դուրս ե գալիս, վոր պառավը վոչ թե մի չար կախարդ ե յեղել, այլ բարի վոդի: Նա յե տվել թագավորի աղջկանն են շնորհքը, վոր արտասուքները մաքարիտ դառնան, ու նա յե նրան պահել դժբախտության որերում: Նա յե պահել են բոլոր կախարդված ու դժբախտացած աղջիկներին, վոր դարձել ելին սակեր, այժմ նորից առան իրենց մարդկային կերպարնքը: Վերջապես նա յե առաջնորդել բարի յերիտասարդ իշխանին դեպի թագավորի անմեղ հալածված աղջիկը:

Ես բոլորից հետո ամուսնանում են նրանք, մոռանում են իրենց անցկացրած ծանր որերը, և ապրում են ուրախ ու յերջանիկ, բարի վոգու պարզեած են գեղեցիկ պալատում, վոր տռաշ մի աղքատիկ տնակ եր:

(1914)



## ԶԱՐՄԱՆԱԼԻ ԱՇՈՒՂԸ

Մի աշուղ ե լինում: Որերից մի որ ես աշուղը մենակ վեր ե կենում գնում անտառը: Անտառում գես ե մտածում, զեն ե մտածում, մինչև վոր մտածելու բանը հատնում ե: Վոր մտածելու բանը հատնում ե՝ «Ո՞ֆ, ասում ե, ինչ լերկար ու ձանձրալի յե ժամանակը եստեղ: Պետք ե մի լավ ընկեր գտնեմ ինձ համար...»:

Ասում ե, ջութակն ուսից վեր ե բերում ու նվազում: Ջութակի ձենը հնչում ե անտառում: Ես ձենի վրա անտառի խորքից վազեվազ դուրս ե գալիս մի գել:

— Ա՛յս, գելը...—հառաչում ե աշուղը:—Բայց յես սրան չեյի ուզում ... Յես գելի հետ ինչ անեմ...

Իսկ գելը մոտ ե գալիս ու սկսում ե խոսել:

— Եդ ինչ լավ ես նվազում, վարպետ: Ի՞նչ կլինի ինձ ել սովորեցնես:

— Սրա սովորեցնելն ինչ բան ե վոր, —պատաս-

Խանում ե աշուղը:—Կսովորեցնեմ, միայն թե ինչ  
վոր ասեմ, պետք ե լսես:

— Աչքիս վրա,—խոսք ե տալիս գելը:—Ենպես  
լսեմ, ինչպես աշկերտը վարպետին կլսի:

— Դե վոր եղպես ե՝ յետևիցս արի:

Գնում են: գնում են, գնում, տեսնում են ճանա-  
պարհին մի պառավ կաղնի, մեջը փուչ, ինքը ճղված:

— Դե հիմի լսիր, տես ինչ եմ ասում,—դառնում  
ե աշուղը գիլին:—Յեթե ձշմարիտ սրտով ուզում ես  
նվազել սովորես, ամենից առաջ պետք ե առջեի թա-  
թերդ ես ծառի ձեղքում դնես:

Գելը լսում ե վարպետին, առջեի թաթերը դնում  
ե ծառի ձեղքում: Վարպետը ձեռաց կողքի մեծ քա-  
րը վերցնում ե ենպես ուժով զարկում աշկերտի  
ջուխտ թաթերին ու ենպես խորը մխում ծառի ձեղ-  
քի մեջ, վոր լիեզը տեղն ու տեղը նստում ե ու  
մնում ե գերի են ծառին:

— Եստեղ կաց, մինչև մին ել յետ կդամ,—ասում  
ե վարպետն ու գնում: Մի քիչ վոր գնում ե, դարձյալ  
սկսում ե ինքն իրեն հետ խոսել.

— Ո՞Փ, ինչ յերկար ու ձանձրալի յե ժամանակն  
եստեղ ... Պետք ե մի լավ ընկեր գտնեմ ինձ համար...

Ասում ե, ջութակն ուսից վեր ե բերում ու նվա-  
գում: Մին ել տեսնում ե՝ ծառերի արանքից դուրս  
յեկավ աղվեսը:

— Հիմի ել աղվեսը ... բայց յես սրան ել չեմ  
ուզում ... Աղվեսի հետ ինչ անեմ,—հառաչում ե աշու-  
ղը, իսկ աղվեսը գալիս ե առաջը կտրում:


— Եղ ինչ լավ ես նվագում, վարպետ: Ի՞նչ կլինի  
ինձ ել սովորեցնես:

— Ինչու չե, կսովորեցնեմ,—պատասխանում ե  
աշուղը,—միայն թե ինչ վոր ասեմ, պետք ե լսես:

— Աչքիս վրա, խոսք ե տալիս աղվեսը:—Ենպես  
լսեմ, ինչպես աշկերտը վարպետին կլսի:

— Դե վոր եղպես ե՝ յետևիցս արի:

Աղվեսն ուրախուրախ ընկնում ե վարպետի յե-  
տեվից ու գնում են: Գնում են, գնում են, մտնում  
են մի նեղ կածան, յերկու կողմից բարձր թփեր:  
Վարպետն եստեղ կանգ ե առնում, ճամփի մի կողմից  
մի փոքրիկ ընկուզի ծառի ծեր ե կուացնում դեպի  
գետին ու վոտը գնում վրեն, մյուս կողմից ել մի  
ուրիշ ծառ ու կանչում ե աղվեսին:



— Հապա դե յեկ, սիրելիս. յեթե ուզում ես բան  
սովորես՝ դեսը բեր առջեի ծախտի:

Աղվեսը լսում ե, թաթը մեկնում ե: Վարպետը  
բռնում ե կապում ծառի կատարին:

— Դե հիմի ել աշը բեր:

Աջն ել կապում ե աջ կողմի ծառի կատարին: Հետո  
մտիկ ե անում՝ ամուր են կապված թե չե, ու  
բաց թողնում ծառերի կատարները: Ծառերը յետ են  
գնում, վերև են թոցնում աղվեսին ու սկսում են ճու-  
ճել ողի մեջ:

— Եստեղ կաց, մինչեւ մին ել յետ կզամ,—ասում  
ե վարպետն ու շարունակում իր ճամփեն:

Միքիչ վոր անց ե կենում, նորից սկսում ե ինքն իրեն  
խոսել.—Ո՞ֆ, ի՞նչ յերկար ու ձանձրալի ժամա-  
նակն եստեղ... Պետք ե մի լավ ընկեր գտնեմ ինձ հա-  
մար...—Ասում ե, ջութակն ուսից վշտ ե բերում ու նվա-  
գում: Վոստոստալով առաջն ե յելնում մի նապաստակ:

— Համեցեք. հիմի ել նապաստակը... բայց յես սրան  
ել չեմ ուզում... Յես նապաստակի հետ ի՞նչ անեմ,—  
հառաչում ե աշուղը, իսկ նապաստակը մոտ ե դալի:

— Եդ ի՞նչ լավ ես նվագում, վարպետ: Ի՞նչ կլինի  
ինձ ել սովորեցնես:

— Ինչու չե, կարելի յե, և հեշտ ել կսովորես:  
Միայն թե ի՞նչ վոր ասեմ, պետք ե լսես:

— Աչքիս վրա,—խոսք ե տալիս նապաստակը,—  
ենպես լսեմ, ի՞նչպես աշկերտը վարպետին կլի:

— Դե վոր եղաքես ե՞ յետեիցս արի:  
Գնում են: Գնում են, գնում են, դուրս են գալիս  
անտառի մեջ մի բացատ: Բացատի մեջտեղը կանգնած  
ե լինում մի բարդի: Վարպետը մի թոկ ե հանում,  
թոկի մի ծերը ծառից ե կապում, մյուս ծերը նապաս-  
տակի վզից ու կանչում ե.

— Հապա, իմ խլուշիկ, դե մի քսան անգամ ես  
ծառի բոլորքով պտուտ արի, տեսնեմ քո ճարպիկու-  
թլունը:

Նապաստակը լսում ե, քսան անգամ պտուտ ե դալի  
ծառի բոլորքով: Թոկը փաթաթվում ե ծառին, խեղճը  
մնում ե ծառին կպած ու քանի ձիգ ե տալիս, քաշում,  
քաշքում, ենքան թոկը կիզը կտրում ե:

— Եստեղ կաց, մինչեւ մին ել յետ կզամ,—ասում  
ե վարպետն ու իր ճամփեն շարունակում:

Վարպետի գնալուց յետը դես ե ձիգ տալի, դեն ե  
ձիգ տալի գելը, քարն ե կրծում, ծառն ե կրծում,  
ենքան անում ե, մինչեւ թաթերը հանում ե կաղնու  
ծեղքից: Հանում ե ու, թե չորս վլոտն ուներ՝ չորսն  
ել փոխ ե առնում, կատաղած, գաղաղած ընկնում ե  
վարպետի յետեից, վոր հասնի պատառ-պատառ անի:  
Ողում ճոճկող աղվեսը հեռվից աղատ գիլին տեսնում  
ե թե չե՝ սկսում ե լաց լինել ու աղաղակել.

— Գել ախպեր, գել ախպեր, հասիր ոգնիր ինձ,  
են վարպետը ինձ խաբեց:

Գելը հասնում ե ծառերը կուցնում, թոկերը կըր-  
ծոտում, կտրատում, աղվեսին աղատում, ու յերկու-  
սով միասին ընկնում են վարպետի յետեից, վոր  
իրենց վրեժը հանեն:

Գնում են, գնում են, ճամփին պատահում են  
ծառին փաթաթված նապաստակին: Մրան ել եստեղ  
են աղատում ու յերեքով միասին լարվում են ընդ-  
հանուր թշնամու—վարպետի յետեից:

Վարպետը շարունակում ե իր ճանապարհն ան-  
տառում: Մի անգամ ել նվագում ե, ու ես անգամ  
բախտը բանում ե: Զութակի ձենը լսում ե մի աղ-  
քատ փայտահատ, գործը թողնում ե, կացինը դնում  
ե կոնատակին՝ գալիս ե կանգնում յերգը լսելու:

— Վերջապես յեկավ իմ ընկերը,—բացականչում ե

վարպետը։ Յես մարդ եյի վորոնում, վոչ թե վայրենի գաղաններ։ — Ու սկսում ե նվագել ենքան սրտառուչ, ենքան հրաշալի, վոր փայտահատը զմայլում ե, սիրտը կրծքում ուրախությունից խաղս ե լինում։ Հենց ես ժամանակ վրա յեն հասնում գելը, աղվեսն ու նապաստակը։ Փայտահատը նկառում ե, վոր նրանց մտքում չար բան կա վարպետի դեմ, իսկույն առաջ ե անցնում, բարձրացնում իր սուր կացինն ու ասում։

— Ով սրա վրա գա, իմացած կենա, վոր ինձ հետ ե գործ ունենալու։

Գաղանները ես վոր տեսնում են՝ սարսափում են ու, պհակ, յետ են փախչում դեպի անտառի խորքերը։ Վարպետը փայտահատին շնորհակալություն անելու համար մի յերգ ել նվագում ե ու գնում։ Գնում ե հասնում ե իր տունը, ջութակը պատին կախում ու պառկում։ Գիշերը գալիս ե, ուզում ե քնի, քունը չի տանում։ Շարունակ գելը, աղվեսն ու նապաստակն են մտքի միջին։ Մին ել հանկարծ գիշերվա մի ժամանակը հենց լուսամուտի տակին գելն ու աղվեսը սկսում են ձեն ձենի տալ ու վոռնալ, իսկ նապաստակը նրանց յետելից ծվծվում ե.

— Ճը՛զը, վը՛զը, քաջ վարպետ,  
Են ի՞նչ արիր դու մեղ հետ.  
Մեղ տանջել իր ուզում դուն,  
Տանջվիր հիմի դե զարթուն.  
Մինչեւ լուսը մենք եսպես  
Հանգիստ քուն չենք տալու քեզ...  
Ճը՛զը, վը՛զը, քաջ վարպետ,  
Են ի՞նչ արիր դու մեղ հետ...


Յերգում են, յերգում են անասունները։ Ջութակն ել պատի վրիցն ե սկսում իրեն-իրեն նվագել նրանց հետ, ու ենպես աղեկառը, ենպես վողբալի, վոր խեղճ վարպետը չի իմանում ուր կորչի են յերգի ու յերաժտության ձենից։ Ամբողջ գիշերը չի կարողանում աչքը կպցնի, տանջվում ե ու տանջվում։


Ծերերն ասում են, իբրև թե վարպետը են որվանից յետը ինչքան ապրեց աշխարհքում՝ ամեն գիշեր նրա լուսամուտի տակ հնչում եր ես տխուր, սրտածըմ-լիկ յերգը.

«Ճը՛զը, վը՛զը, քաջ վարպետ,  
Են ի՞նչ արիր դու մեղ հետ...»

Ու ջութակը վողբում եր հետը։ Ամեն գիշեր, ամեն գիշեր մինչեւ լուսը, մինչեւ իր մահը։

(1914)






## ԳՈՐԾԸ

Ժամանակով մի թագավոր ե լինում։ Ես թագավորը մի քանի աղջիկ ե ունենում՝ մինը մլուսից գեղեցիկ։ Բայց ամենից գեղեցիկը լինում ե փոքրը։ Ենքան սիրուն, ենքան շարմաղ, վոր ելազուտես, չխմես, կանգնես ու մտիկ անես։

Թագավորի պալատի կողքին մի անտառ ե լինում։ Անտառում, մի հին լորենու տակմի ջրհոր։ Ես սիրուն աղջիկը սովորություն ե ունենում՝ ամեն որ գնում ե են հով տեղը ջրհորի մոտ խաղ ե անում, իր վոսկի գնդակը վերև զցում ու բռնում։ Մի որ ել խաղալիս շատ բարձր ե գցում, չի կարողանում բռնի, ու գնդակն ընկնում ե ջրհորը։ Վերևից մտիկ ե անում— ջրհորը աչքին թվում ե անտակ։ Սկսում ե աղի-աղի լաց լինել։ Ես լացի ժամանակ հանկարծ մինը ձեն ե տալիս։

— Ի՞նչ ե պատահել, թագավորի աղջիկ։ Ինչի՞ համար ես եղած աղի-աղի լաց լինում։

Մտիկ տա աղջիկն ի՞նչ տեսնի. մի ահագին գորտը ջրհորի պոռնդին նստած՝ մարդու նման խոսում է։ Զարմանում ե։ Ասում ե.



— Խաղալիս գնդակս ջրհորը զցեցի, գորտ ախալեր,  
Նրա համար եմ լաց լինում:

— Ի՞ն,—լինդում ե գորտը, —եդ ի՞նչ բան ե, վոր  
գրա համար լաց ես լինում: Ի՞նչ կտամ, վոր քո  
գնդակը հանեմ:

— Ամեն, ամեն բան կտամ, —սկսում ե աղաչել  
աղջիկը, —իմ բոլոր զարդերը կտամ, իմ անդին քա-  
րերը կտամ, իմ վոսկե թագը կտամ, միայն թե իմ  
սիրուն գնդակը հանես:

Դորտը, թե.

— Ինչիս են պետք քո զարդերը, քո անդին քա-  
րերը, մարդարիտներն ու վոսկե թագը: Չեմ ուզում:  
Ա՛յ, ուրիշ բան ե՝ յեթե ինձ սիրելիր ու ենպես սի-  
րելիր, վոր ամեն բանում քո անբաժան ընկերը լի-  
նելիր, քեզ հետ միասին սեղան նստելինք, մի ամա-  
նով ուտելինք, մի բաժակով խմելինք ու մի անկող-  
նում քնելինք: Ա՛յ, յեթե ես խոստանայիր, են ժամա-  
նակ կցատկելի ջրհորն ու հատակից կհանելի քո վոսկե  
գնդակը:

— Լավ, լավ, ինչ վոր ուզում ես եդ ամենը խոս-  
տանում եմ, միայն թե իմ գնդակը բերես, —խոսք ե  
տալիս թագավորի աղջիկն ու հետն ել մտքումն ասում  
ե. — Սրան մտիկ տուր ե, տխմար կռկոան, մի տես  
ինչեր ե ուզում: Գնա ջրհորում ճպեխվիլ<sup>1)</sup> ու կըուկ-  
ռացրու. քո ի՞նչ բանն ե մարդուն ընկեր դառնաս...»

Գորտը հենց վոր ես խոստումը լսում ե՝ սուզվում  
ե ջրի տակը, գնդակը զցում ե կանաչ խոտի մեջ:  
Աղջիկը վրա յե թոչում գնդակը հափշտակում, ուրախ-

1) Ճպեխվել—ճպմլել, տափակվել:

ուրախ, թոչկոտալով վազում ե դեպի տուն: Գորտը  
կանչում ե.

— Կաց, կաց, ինձ ել տար հետդասախար յես քեզ  
պես վազել չեմ կարող...

Աղջիկը յետ ել չի նայում. վազում ե ընկնում  
հոր պալատն ու գորտը մտիցը հանում: Գորտը յետե-  
վից նայում ե նայում ու ել յետ մտնում ե ջրհորը:

Մյուս որը հենց վոր թագավորի աղջիկն իր հոր ու  
պալատականների հետ միասին սեղան ե բազմում ու  
սկսում ե ուտելիր իր վոսկե անանով, չըլքի, չըլքի,  
մինը մարմար սանդուխներով բարձրանում ե, դու-  
ռը ճանկոտում ու կանչում.

— Թագավորի փոքրիկ աղջիկ, բաց արա...

Թագավորի աղջիկը վազեվազ գնում ե տեսնի՝ ով  
ե կանչում իրեն: Դուռը բաց ե անում, տեսնում  
առաջին կանգնած գորտը: Իսկույն դուռը յետ ե զար-  
կում ու վախեցած գալիս ե իր տեղը նստում:

— Եդ ի՞նչ եր, աղջիկս, ինչից եղպես վախեցիր:  
Զինի՞ թե դև կա կանգնած դռան յետելը, ուզում ե  
քեզ վախցնի, —հարցնում ե թագավորը:

— Վհչ, հայրիկ, դև չի, մի անձոնի գորտ ե:

— Գորտն ի՞նչ ե ուզում քեզնից:

— Գիտես, հայրիկ... Յերեկ անտառում ջրհորի  
մոտ խալ եյի անում, հանկարծ իմ վոսկե գնդակն  
ընկավ ջրհորը... Յես լաց ելի լինում... Գորտը հանեց  
ինձ տվից իմ վոսկե գնդակը... Յեվ վորովհետեւ նա  
դրա փոխարեն ուզում եր, վոր յես անպատճառ իր  
խաղընկերը դառնայի, լես ել խոստացա... Բայց իսկի  
մտքովս չեր անցնում, թե՝ ճիշտ վոր, նա կկարենար

իր ջրհորը թողնել... Ահա հիմի յեկել ե, կանգնած ե  
և ստեղ դռան յետելը, ուզում ե գա ինձ մոտ:

Այսինչ գորտը ճանկում ե դուռն ու կանչում.

— Թագավորի փոքը աղջիկ,  
Յեկ դուռը բաց դու կարգին,  
Միտդ ե յերեկ ինչ խոսք տըլիր  
Պաղ ջըրհորի յեղերքին...  
Թագավորի փոքը աղջիկ,  
Յեկ դուռը բաց դու կարգին:

Թագավորն աղջկանն ասում ե.

— Խոսք ես տվել, պետք ե կատարես: Գնա դուռը  
բաց արա:

Աղջիկը գնում ե դուռը բաց ե անում: Գորտը  
յետելից ներս ե ցատկում, հնպ, հնպ, ցատկելով հաս-  
նում ե աթոռին ու կանչում ե.

— Դե ինձ բարձրացրու դիր քեզ մոտ:

Աղջիկը իր մեջը շատ ե նեղանում, տատամսում  
ե, բայց թագավորը պատվիրում ե, վոր գորտն ինչ  
ասում ե՝ լիի: Աղջիկը գորտին բարձրացնում ե գնում  
իր աթոռին: Աթոռին ե գնում թե չե՝ հիմի ել ուզում  
ե սեղանը բարձրանա: Դնում ե սեղանին: Հիմի ել  
ասում ե՝ մոտ քաշիր քո վոսկե ամանը, վոր միասին  
ուտենք, ինչ աներ խեղճ աղջիկը: Ես մի կամքն ել  
ե կատարում: Ուտում ե պրծնում, հիմի ել թե՝ կշա-  
ցա, քունս տանում ե, ինձ տար քո սենյակը, մե-  
տաքսե անկողինդ շինի, վոր քեզ հետ միասին քնենք:  
Եստեղ արդեն աղջիկն սկսում ե լաց լինել: Սառն ու  
լաբրծուն գորտին դիպչելուց ել զզվում եր ու զար-  
դանդում, հիմի պետք ե տաներ իր գեղեցիկ ու մա-

քուր անկողնում իր հետ քնեցներ: Զի ուզում, բայց  
հերը առաջվանից ավելի յե զայրանում: Ասում ե՝  
այժմ չպետք ե արհամարհն նրան, ով վոր փորձանքի  
ժամանակ թանգ եր քեզ համար: Ինչ վոր իսոստացել  
ես—պետք ե կատարես:

Ճարահատված աղջիկը  
յերկու մատով գորտի մեջ-  
քից բռնում ե, տանում  
իր ննջարանն ու դնում  
ե անկունում: Բայց արի  
տես, վոր գորտը սրանից  
ել չի խրատվում: Աղջիկը  
հենց անկողին ե մտնում  
թե չե՝ ցատկելով մոտենում  
ե հատակին կանգնում ու  
ճրդաւալով խոսում ե.

— Հը, եդ ինչ ե...յես,  
ել եմ հոգնած...իսե ել եմ  
ուզում քնեմ...ինձ ել պառ-  
կեցրու քեզ հետ...

Ենպես ե ասում, վոր  
աղջկա սիրտը շարժվում ե,  
ժպտալով վերցնում ե դնում  
իր անկողնի վրա: Դնում ե  
իր անկողնի վրա թե չե,  
մին ել են ե տեսնում՝ ես գորտի կաշին տրաքեց, ու  
միջիցը դուրս յեկալ մի գեղեցիկ յերիտասարդ, կող-  
քին նստեց, կողքին նստում ե ու պատմում զարմա-  
ցած աղջկանը, թե ինքը մի թագավորի տղա յե յե-  
ղել. չար կախարդը դարձել ե գորտ, այժմ աղջիկը



իրեն հանեց ջրհորից ու վերադարձրեց իր մարդկալին  
կերպարանքը:

Եստեղից ուրախութեախ վեր են կենում գնում  
թագավորի մոտ, պատմում են ամեն բան: Ենպես ել  
դուք ուրախանաք, ինչպես վոր թագավորն ուրա-  
խանում ե. մեծ հարսանիք ե սարքում ու նրանց  
պակում իրար հետ:

Հարսանիքից հետո նորապսակները պիտի գնային  
թագավորի տղի հայրենիքը: Առավոտը վաղ գալիս ե  
դուանը կանգնում ութ ձիանի կառքը, ձիանքը սպի-  
տակ ջայլամի սպիտակ բարձր փետուրները գլխնե-  
րին, վողջ սարքերը վոսկեղեն, իսկ կառքի յետեր  
կանգնած թագավորի տղի հին ծառան՝ չավատարիմ  
Ոհանը: Ու եսպես իր Հավատարիմ Ոհանը թիկունքին,  
ջահել կինը կողքին, թագավորի տղեն սլանում ե դե-  
պի հայրենիք:

Շատ են գնում թե քիչ, մին ել հանկարծ ճանա-  
պարհին ականջովը մի ձեն ե ընկնում. թվում ե թե  
կառքի յետերը մի բան կոտրեց: Յետ ե դառնում կանչում.  
— Ի՞նչ եր, Ոհան, կմոքը կոտրեց:


— Վհչ, վհչ, իմ տեր, կառքը չեր ես.  
Ես իմ սրտի կապն եր յերկաթ,  
Վոր տանջում եր ինձ անընդհատ  
Են որվանից, ինչ դու հորում  
Ապրում եյիր գորտի որում:

Գնում են: Ճանապարհին մի յերկու անգամ ել եղ  
տեսակ ձայներ են ընկնում թագավորի տղի ական-  
ջովը ու ամեն անգամ ել ենպես ե թվում, թե կառ-  
քը կոտրեց, բայց իսկապես Ոհանի սրտի ծանը յերկաթի

կապանքներն եյին խորտակվում ու ընկնում, Են որ-  
վանից, ինչ վոր իր տերը գորտ եր դարձել՝ Հավա-  
տարիմ Ոհանը սաստիկ տիսրել եր ու յերեք պատ  
յերկաթի կապով կապել եր իր սիրտը, վոր տիսրու-  
թյունից չպատռեր: Այժմ եդ կառքը յեկել եր, վոր  
իր յերիտասարդ տիրոջը հայրենիք տանի: Հավատա-  
րիմ Ոհանը յերկուսին ել նստեցրել եր կառքի մեջը՝  
ինքը կանգնել նբանց թիկունքին, և, տեսնելով իր  
յերիտասարդ տիրոջը կախարդանքից ազատված ու  
բախտավոր, ուրախությունից սիրտը ոխտը գազ բաց  
եր յեղել, ու իր յետերից խորտակվում, ընկնում եյին  
սրտի ծանը կապանքները:

(1914)





## ՀԵՆԶԵԼՆ ՈՒ ԳՐԵՏԵԼԸ

Մի մեծ անտառի բերանում ապրում եյին մի աղքատ փայտահատ ու իր կինը։ Յերկու յերեխս ունեցին, աղի անունը Հենզել եր, աղջկանը՝ Գրետել։

Առանց են ել պակասության մեջ են լինում, թանգությունն ել վոր ընկնում ե են կողմերում, իրենց որվա հացն ել չեն կարողանում ճարեն։ Մի որ ել, տեղումը պառկած, փայտահատը դես ե մտածում, դեն ե մտածում, դարդից մի կողքից մյուս կողքի վրա յե շուռ ու մուռ գալիս, վերջը կնոջն ասում ե.

— Ես ինչպես պետք ե անենք, այ կնիկ, իսկի բան չունենք, ինչով պիտի պահենք ես յերեխաներին։

— Գիտես, այ մարդ, — պատասխանում ե կինը, — արի առավոտը ծերին յերեխաներին տանենք անտառի խորքը, կրակ անենք, մի-մի կտոր հաց տանք ձեռները ու ենտեղ թողնենք, մենք յետ գանք մեր գործին։ Ճամփեն չեն գտնիլ, վոր յետ գան տուն, ու մենք կազատվենք։

— Չե, այ կնիկ, — պատասխանում ե փայտահատը, յես երպես բան չեմ անիլ, իմ սիրտը չի տանիլ, վոր յես իմ ձեռքով իմ յերեխաներին տանեմ մենակ թող-

նեմ անտառում, վերջապես դազանները կհարձակվեն և կպատառուեն նրանց։

— Է՞ն, հիմար, — ասում ե կինը, — եսպես թե ենապես չորսս ել սովամահ կորչելու յենք, են ժամանակ գնա ու դագաղների համար տախտակ տաշիր... Ու հանգիստ չի տալի մարդուն, մինչև վոր չի համաձայնվում իրեն հետ։

— Բայց ելի մեղքս գտլիս ե խեղճ յերեխաների վրա, — ասում ե փայտահատը կնոջ հետ համաձայնվելուց հետո: Իսկ յերեխաների գունը սովից չի տանում, լսում են ամեն բան, ինչ վոր խորթ մերը ասում ե իրենց հորը։

Աղի-աղի լաց ե լինում Գրետելը ու դառնում Հենզելին։

— Մենք կորանք, Հենզել։

— Սնես կաց, Գրետել ջան, — ասում, ե Հենզելը, — դարդ մի անիլ, իս սրա ճարը գիտեմ։

Յեվ ահա մեծերը քնում են թե չե, Հենզելը վեր ե կենում, իր շորերը հագնում, դուռը բաց ե անում ու ծլկում փողոց։ Լուսինը պայծառ լուսավորում եր ու իրենց տան առջևը ցրված սպիտակ լափուկները<sup>1)</sup> արծաթի փողի նման շողշողում եյին։ Հենզելը կունում ե, ու գրանցն ինչքան տանում ե, եղ քարերով լցնում ե։ Հետո վերադառնում ե տուն։ Գրետելին ասում ե.

— Հանգիստ կաց, քույրիկ ջան։ Քնիր, աստված մեզ չի կորցնիլ։ — Ու նորից պառկում ե իր անկողնում։

1) Լափուկ — փողքիկ, վողորկ ջրաքարեր։

Առավոտը ծեքում ե թե չե, արևածագից առաջ,  
խորթ մերը գալիս ե յերեխաներին զարթեցնում:

— Դե, շուտ արեք, վեր կացեք, ծույլեր, պատ-  
րաստվեցեք գնանք անտառը փետ բերելու:—Հետո  
ամեն մեկին մի-մի կտոր հաց ե տալիս ու պատվիրում:

— Ահա ես ձեղ տալիս եմ ճաշի համար, տեսեք,  
մինչև ճաշը չուտեք, թե չե միենույն ե, հետո ել  
վոչինչ չեք ստանալու:

Գրետելը հացը դնում ե գրպանը, վորովհետեւ չեն-  
դելի գրպանները բերնե բերան լիքն եյին քարերով:  
Հետո վեր են կենում ու ճանապարհ են ընկնում դե-  
պի անտառը:

Մի քիչ վոր անց են կենում, չենդելը կանգ ե առ-  
նում ու նայում ե յետ՝ դեպի իրենց խրճիթը, ու շա-  
րունակ եդպես յետ ե մնում: Հերն ասում ե.

— Հենդել, ի՞նչ ես դու շարունակ յետ մտիկ տա-  
լիս ու յետ մնում, հորանջելու ժամանակ չի, վոտներդ  
ժամ տուր:

— Հայրիկ, յես մեր սպիտակ կատվին եմ մտիկ  
տալիս, այ, ենտեղ կտերը նստած ե, կարծես թե մեզ  
վերջին «մնաս բարովն» ե ասում:—Խորթ մերը եստեղ  
խոսքը կտրում ե.

— Սպուշ, իսկի յել են մեր կատուն չի, են կտու-  
րի վրի սպիտակ ծխնելույզն ե, վոր փայլում ե արեկ  
տակ, իսկ Հենդելը կտուրի վրա նայելու մասին իսկի  
չեր ել մտածում, նա յետ ընկնելով իր գրպանի սպի-  
տակ քարերն եր ցանում ճամփին:

Հենց վոր հասնում են անտառի խորքը՝ հերն  
ասում ե.

— Դե, յերեխեք, փետ հավաքեցեք, ձեզ համար  
կրակ անեմ, վոր չմրսեք:

Չեռաց Հենդելն ու Գրետելը ջախ են հավաքում,  
բերում կիտում: Զախը վառում են, բոցը վեր ե  
բարձրանում: Խորթ մերը ասում ե.

— Դե, յերեխեք, դուք կրակի կողքին պառկեցեք  
ու հանգստացեք, իսկ մենք գնանք մի քիչ հեռու փետ  
անենք, պրծնենք թե չե՝ կգանք ձեզ ել կվերցնենք,  
միասին կգնանք տուն:

Հենդելն ու Գրետելը կրակի կողքին նստում են,  
ճաշելու ժամանակն ել վոր գալիս ե, ամենքն իրենց  
հացի կտորն ուտում են: Յեվ վորովհետեւ կացնի ձեն  
եյին լսում, հավատացած եյին, վոր իրենց հերը մո-  
տիկ մի վորեկցե տեղ ե: Բայց վոր թրխկացնում եր,  
են կացինը չեր, մի կոճղ եր, վոր փայտահատը կա-  
պել եր մի չոր ծառի. քամուց գնում եր գալիս, զար-  
կում ծառի բնին ու թրխկացնում: Ու եսպես, յերե-  
խեքը յերկար-յերկար նստում են, աչքները հոգնա-  
ծությունից փակվում են իրանց-իրանց, ու խորը  
քնում են:

Մին ել վեր են կենում, տեսնում են՝ արդեն մութ  
գիշեր ե:

— Վհնց պետք ե ես անտառից դուրս գանք, Հենդել:  
Հենդելը սիրտ ե տալի.

— Մի քիչ կաց, հրես լուսնակը դուրս կզա, ճա-  
նապարհը կզտնենք:

Հենց վոր լուսինը դուրս ե գալիս, Հենդելը քրոջ  
ձեռքը բռնում ե ու գնում իր ցանած քարերով, վո-  
րոնք արծաթի փողերի նման պապում եյին ու ցուց  
տալիս ճանապարհը:

Ամբողջ գիշերը եսպես մինչև լուս գնում են ու  
լուսաբացին հասնում են իրենց տունը։ Դուռը՝ ծե-  
ծում են. խորթ մերը բաց ե անում, ու թեև շատ ե  
զարմանում, վոր տեսնում է Հենդեն ու Գրետեն  
են, բայց ասում ե.

— Այ դուք չար յերեխեք, եսքան ժամանակ ի՞նչ  
եք անտառում քնել ու մնացել, մենք ել կարծում  
եյինք՝ ել չեք ուզում մեզ մոտ վերադառնաք։

Իսկ հերն ուրախանում ե, զորովհետև նրա սիրաը  
ցավում եր, վոր իր յերեխաներին մենակ անտառում  
եր թողել։

Մի քիչ ժամանակ անց կենալուց յետը, նորից  
սով ե ընկնում ամեն տեղ, ու նորից յերեխաները  
լուսում են, թե ինչպես իրենց խորթ մերը գիշերը հորն  
ասում ե.

— Ել յետ ինչ ունեյինք չունելինք կերանք։ Մե-  
նակ մի կես հաց ե մնացել, են ել վոր կերանք՝ մեր  
բանը պրծած ե։ Պետք ե ես յերեխանցը հեռացնենք։  
Տանենք անտառն, ես անգամ ավելի խորը, վոր ել  
չկարողանան ճամփա գտնեն ու յետ գան, թե չե ել  
մեզ փրկություն չկա։

Ես բանը քարի նման ձնշում ե հոր սիրաը, ու միտք  
ե անում.

— Ավելի լավ ե են մնացած վերջին պատառն ել  
բաժանի իր յերեխաների հետ։

Բայց ինչ վոր ասում ե, կինը վոչ մի բան չի  
ուզում լսի՝ հենց մի գլուխ հայիոյում ե ու նախա-  
տում։ Դե ով վոր այրն ասել ե, բենն ել պետք ե ասի։  
Փայտահատն ել, վոր մի անգամ արդեն կոսջ հետ

համաձայնել եր, յերկրորդ անգամ ել պետք ե համա-  
ձայներ։

Իսկ յերեխաները դու մի ասիլ քնած չեն ու ես  
բոլորը լսում են։ Մեծերը քնում են թե չե, Հենդելը  
տեղից վեր ե կենում, ուզում ե առաջվա նման ելի  
դուրս գնա ու պաշարի համար գրպանը լափուկներով  
լցնի, խորթ մերը դուռը փակած ե լինում, չի կարո-  
ղանում դուրս գնա, բայց ելի քրոջն ամեն կերպ  
սիրտ ե տալիս։

— Լաց մի լինիր, Դրետել ջան, դու հանգիստ  
քնիր քեզ համար։ Աստված վողորձած ե, մեզ չի  
կորցնիլ։

Առավոտը ծեքին խորթ մերը գալիս ե տեղներիցը  
վեր կացնում։ Ամեն մեկին մի կտոր հաց ե տալիս,  
հացի կտորն ել առաջվա տվածիցն ավելի փոքր։ Յեվ  
ահա անտառը գնալիս ճամփին Հենդելը գրպանում  
շարունակ մանրում ե իր հացի կտորը, շուտ-շուտ յետ  
մնում ու ցանում յետեներից։ Հերն ասում ե.

— Հենդել, դու քանի կանգնես ու չորս կողմի վրա  
հորանջես. ճամփեղ գնա ելի։

— Հայրիկ, յես իմ ձերմակ աղավնուն եմ մտիկ  
տալիս, վոր հրեն հա մեր տանիքին նստած՝ կարծես  
թե ինձ բարև ե զրկում։

— Հիմար, —կանչում ե մերը, —են իսկի յել քո  
աղավնին չի, են սպիտակ ծխնելույզն ե արեի տակ  
սպիտակին տալիս։

Իսկ Հենդելը եղ ժամանակ հացի փշրանքները հենց  
դցում ե ու գցում իրենց ճամփին։

Յերեխաներին տանում են անտառը, ենպես մի

խորը տեղ, վոր իրենց որում չեյին յեղած. ենտեղ ել կրակ են անում, ու խորթ մերն ասում ե.

— Յերեխեք, դուք եստեղ նստեցեք, ու, թե քուն-ներդ կտանի, քնեցեք. իսկ մենք մի քիչ ավելի խո-րը գնանք, փետ հավաքենք, հետո իրիկունը, յերք վոր գործներս կվերջացնենք, կգանք ձեզ ել կառնենք ու կերթանք տուն:

Ճաշի ժամանակը վոր հասնում ե, Գրետելը իր հացի կտորը բաժանում է Հենդելի հետ, վորովհետև Հենդելն իր հացը ճանապարհին փշրել եր: Հետո ննջում են. իրիկունն ել վրա յե հասնում, բայց վոչ վոք չի գալիս խեղճ յերեխաների յետեկց: Զարթնում են կես գիշերին: Հենդելը սկսում ե սիրտ տալ իր քըոջը:


— Գրետել ջան, սպասիր մինչեւ լուսինը դուրս գա, են ժամանակ կերեան հացի փշրանքները, վոր յես ճամփին շաղ եմ տվել. նրանցով կդտնենք մեր ճամփեն ու կդնանք տուն:

Լուսինը դուրս ե գալիս թե չե, յերեխեքը ճամփա յեն ընկնում յետ դեպի տուն, բայց վոչ մի փշրանք չեն դտնում, վորովհետև դաշտերի ու անտառների հաղարավոր թոչունները վեր եյին քաղել: Իսկ Հեն-դելը շարունակ Գրետելին ասում ե.

— Ինչպես վոր լինի, մենք կդտնենք ճանապարհը: Բայց ճանապարհը դտնել չեն կարողանում: Թա-փառում են գիշերը մինչև լուս, հետո ամբողջ որը առավոտից մինչև իրիկուն, վոչ մի կերպ չեն կարո-ղանում անտառից դուրս գան. հետն ել սովում են, վորովհետև ուտելու վոչ մի բան չեն ունենում, բացի մի քանի մորին, վոր եստեղ-ենտեղ կարմըին

նյին տալիս խոտերում: Վերջապես, յերբոր ենքան հոգնում են, վոր յերկուսի վոտներն ել թմրում են, մի ծառի տակի պառկում են, քնում: Բացվում ե յերբորդ որվա առավոտը, ինչ վոր յերեխեքը թողել եյին իրենց հորական տունը: Նորից ճանապարհ են ընկնում դեպի տուն, բայց ամեն մի քայլափոխով միայն անտառի խորքն են մտնում ավելի ու ավելի խորը, և յեթե շուտով ոգնություն չհասներ, անպատ-ճառ պետք ե կորչեյին:

Կեսորին տեսնում են մի ծառի ճյուղին մի սպի-տակ սիրուն թոչուն: Ես սպիտակ սիրուն թոչունը ենպես լավ ե յերգում, վոր յերեխեքն ակամայից մա-րում են տեղներն ու ական. դնում նրան: Լուսի



և թե չե, թեին ե անում, յերեխանց կողքից թոչում-նստում մյուս ծառին, յերեխաներն ել նրա յետեկց ենպես գնում են, գնում են, մինչև վոր հասնում են

մի տնակի: Ես տնակի տանիքին թոշունը իջնում եւ Յերեխեքը տնակին մոտենում են, տեսնում են՝ ինքը տունը ամբողջովին հացից ե շինված, կտուրը գաթից, իսկ լուսամուտը թափանցիկ զաքարից:

— Ահա, հենց սրանից ել կսկսենք, — ասում ե Հենդելը, — մի լավ քեփ անենք: Յես տանիքից մի կտոր կրտեմ, դու յել լուսամուտից կեր, Գրետել ով գիտի ինչ անուշ ե, չե:

Ու Հենդելը ձգվում ե դեպի վերև, տանիքից մի փոքրիկ կտոր ե կտրում, Գրետելն ել կռանում ե, սկսում ե լուսամուտի ապակին ուտել: Հենց ես ժամանակ ներսից մի բարակ ձեն ե գալիս:

— Կը՛րծ, կը՛րծ, կը՛րծ, խը՛զ, խը՛զ, խը՛զ,  
Ես ով ե կըրծում տունը:

Յերեխեքը պատասխանում են.

Ես քամին ե անում խիստ,  
Զարածրնին անհանդիստ:

Ու առանց սրանից շփոթվելու շարունակում են ուտել: Հենդելին տանիքն ենքան գուրչեր յեկել, վոր մեծ կտոր կտրեց, իսկ Գրետելը լուսամուտից հանեց մը ամբողջ ապակի, տեղն ու տեղը նստեց ու անուշ անուշ ուտում եր:

Մին ել հանկարծ դռները յետ են բացվում, ու իր գավազանին հենված գուրս ե գալիս մի պառավապառ կնիկ: Հենդելն ու Գրետելը ենքան են վախենում, ենքան են վախենում, վոր պատառները ձեռներիցը վեր են զցում: Իսկ պառավը գլուխը շարժելով առաջ ե գալիս.

— Վարչ, յերեխեք ջան, եղ ով բերեց ձեզ եստեղ:

Ներս յեկեք, յեկեք ինձ մոտ կացեք, մի վախենաք, վոչ մեկիդ վնաս չեմ տալ:

Ասում ե, թաթներիցը բռնում ու ներս տանում: Տանում ե լավ նախաճաշ ե տալիս. ել կաթ, ել շաքարանաց, ել խնձոր, ել ընկուզ: Հետո յերկու տեղ ե զցում մաքուր, ձերմակ: Հենդելն ու Գրետելը վոր պառկում են՝ ենպես ե թվում, թե գրախոն ընկան:

Դու մի ասիլ պառափս եսպես բարի փաղաքուշ ե ձևանում, բայց իսկապես մի չար կախարդ ե յեղել, ամեն կերպ հետեւում ե յերեխաներին և դիտմամբ ել տունը հացից ե շինել, վոր նրանց հեշտ գրավի դեպի իրեն: Ով ճանկն ե ընկնում, սպանում ե, յեփում, լաշում, եղ նրա համար մի ուրախություն ե:


Կախարդների աշքերը սովորաբար կարմիր են լինում ու հեռու չեն տեսնում, բայց զարմանալի սուր հոտառություն են ունենում, ճիշտ գիշատիչ զազանների պես: Անց կենող մարդու հոտը հեռվից են իմանում: Յերբ վոր Հենդելն ու Գրետելը նրա տնակի մոտերքը թափառելիս են լինում, նա հեռվից արդեն նրանց հոտն առնում ե, չարախնդաց ծիծաղում ու վոչում:

— Ե՛, սրանք արդեն ճանկումս են ... սրանք ել ինձանից չեն պրծնիլ...

Առավոտը ծեքին, յերեխաներից առաջ, չար կախարդը մի շուտով տեղիցը վեր ե թոչում ու յերբ տեսնում ե նրանց ենպես խաղաղ քնած, լիքը, վարդագույն թշերով, իրեն-իրեն մոմում ե.

— Ուխայ, ինչ անուշ պատառներ են...  
Հենդելին բռնում ե իր վոսկրոտ ձեռներով, քարշ

Ետալիս, տանում հավանոցը զցում, վանդակավոր դուռը փակում ու թողնում ենտեղ գոռա, ինչքան սիրտը կուզի: Ինչքան ել գոռա՝ ել ի՞նչ պետք ե անի: Հետո գնում ե Գրետելի յետելից, հրում ե ու ձղճղում.  
— Իե, շնոր, վեր կաց, ծնոյլ աղջիկ: Գնա ջուր բեր,



յեղբորդ համար մի վարեկ համով բան յեփիր: Հրեն հավանոցում փակել եմ, պետք ե նրան կերակրել, վոր մի լով չաղանա ինձ համար... Պետք ե չաղանա, վոր ուժում...

Գրետելն ուղում ե լաց լինի, բայց եդ բոլորը զուր ելին. մնում ե սուս ու փուս պառավի հրամանները

կատարել: Ու սկսում ե չենդելի համար համով կերակուրներ իեփել, իսկ իրեն Գրետելին բացի չոր վոսկորներից բան չեր տալիս:

Սմեն առավոտ պառավը գնում ե հավանոցի դուռը կարում ու կանչում.

— Հենդել, մատդ դեսը մեկնիր, տեսնեմ չաղացել ես թե չե:

Հենդելը մատի տեղակ միշտ մի վոսկոր ե դուրս մեկնում, պառավը ել վոր լավ չի տեսնում, չի կարողանում ջոկի, մտածում ե, վոր ես չենդելի մատն ե, ու զարմանում ե, թե ինչպես ե, վոր չենդելն իսկի չի չաղանում:

Եսպես չորս շաբաթը անց ե կենում, չենդելը ելի մնում ե նիհար. պառավի համբերությունը հատնում ե ու ել չի ուղում սպասի:

— Դե, հայդե, Գրետել, գնա ջուր բեր, չաղ լինի թե նիհար, միենույն ե, եգուց չենդելին մորթելու յեմ, յեփեմ ուտեմ:

Ինչքան ե դարդ անում խելձ Գրետելը, ինչքան ե դարդ անում, ջուր բերելիս արտասուքը են ջրի նման աչքիցը թափվում ե:

— Վողորմած աստված, դու մեզ ոգնության հանսես,—կանչում ե նա:— Ցերանի թե անտառում մեզ գաղանները պատառտեյին գոնե յես ու չենդելը միասին կլինեյինք:

— Զուր սիրոդ մի մաշիր, — ասում ե պառավը, — միենույն ե, ել վոչ մի բան չի ոգնի:

Առավոտը վաղ Գրետելը պետք ե վեր կենար, պղինձը կրակին դներ, ջրով լցներ ու տակին կըակ դներ:

— Ամենից առաջ դեռ մի թխվածք անենք. յես  
արդեն փուռը վառել եմ ու խմորը հունցել:

Ասում ե պառակն ու տանում ե խեղճ Գրետելին  
փռան առաջը կանգնեցնում, հրում ե դեպի բոցավառ  
փռան բերանը:

— Մտիր, ասում ե,—զնա տես, փետերը լավ են  
դարսած. լավ են երվում, խմորը դնդելու ժամանակն  
ե, թե չե:

Ուզում ե Գրետելը կռանա թե չե, բոթի գցի փու-  
ռը, ծածկոցը զնի, վոր Գրետելը փոսումը խորովիի,  
հետո հանի ուտի: Բայց Գրետելը գլխի յե ընկնում,  
թե պառավի մտքումը ինչ կա, ասում ե.

— Յես չեմ իմանում ինչպես անեմ, վոր մտնեմ  
մեջ...

— Հիմար անասուն, —բարկանում ե պառավը, —  
չես տեսնում ահագին փռան բերանը. ընը՛, մտիկ  
արա, քիչ ե մտում յես ել մտնիմ մեջ...

Ու ճիշտ վոր, տմբատմբալով մոտենում ե փռանը,  
մինչև անգամ գլուխն ել փռան բերնից ներս ե կոխում:  
Եստեղ Գրետելը հանկարծ յետեից ենպես ներս ե բո-  
թում պառավին, վոր ընկնում ե փռան մեջն, իսկուն  
յետեիցը ծածկոցը ամուր դնում ե ու փակիչը յետեից  
գցում:

Պառավը վոռնում ե, վոնց ե վոռնում... Բայց  
Գրետելը յետ ե վազում, ու անխիղճ վճուկն ել ենպես  
երվում ե պրծնում:

Գրետելը իսկուն վազում ե չենզելի մոտ, հավա-  
նոցի դուռը բաց ե անում ու աղաղակում:

— Չենզել, չենզել, մենք աղատվեցինք, չար պա-  
ռավը կործանվեց...

Դուռը բացվում ե թե չե, թոշունի նման, վոր  
վանդակում փակված կլինի ու դուռը բաց կանեն,  
չենզելը գուրս ե թոշում: Վոնց են ուրախանում յեր-  
կուսով, վոնց են ուրախանում...իրար ճառով են ընկ-  
նում, թոշկոտում են, համբուրվում են, և վորովնետե  
վոչ-վոքից վախ չունեյին, գնում են մտնում պառա-  
վի տնակը, իսկ պառավի տնակի բոլոր անկյուննե-  
րում դարսված են լինում մարդարառվ ու անգին  
քարերով լիքը սնդուկները:

— Ես մեր դուան լափուկներից հո ավելի լավն են, —  
ասում ե չենզելն ու գրախանները ինչքան վոր կտա-  
նեյին՝ լցնում ե, իսկ Գրետելն ասում ե.

— Յես ել եմ ուզում մի բան տանեմ տուն, —ու  
նա յել գոգնոցն ե լցնում պանդե պոռւնգ:

— Դե հիմի գնանք հեռանանք եստեղից, —ասում  
ե չենզելը: — Քանի լուս ե, պետք ե գրւրս գանք ես  
կախարդված անտառից...

Մի քիչ վոր ճանապարհ են կտրում — հասնում են  
մի գետակի:

— Մենք ինչպես անցնենք ես գետն, — ասում ե  
չենզելը: — Վոչ անց ունի, վոչ կամուրջ:

— Գոնե մի նավակ ել չկա, — վրա յե բերում Գրե-  
տելը: — Ահա մի սպիտակ բադիկ ե լողաւմ. արի ինդրեմ,  
գուցե մեղ ոգնի անց կացնի... — ու կանչում ե.

Բադիկ, բադիկ, սիրուն բադիկ,  
լող տուր գեպ մեղ, արի մոտիկ.


Շվարել ենք չենզելն ու յես,  
Առ քո մեջքին, անց կացրու մեզ:

Բաղիկը մոտենում է ափին, Հենզելը նստում է բաղիկի մեջքին ու քրոջը կանչում է, վոր նա յել դա գավակին նստի:

— Չե, —պատասխանում է Գրետելը, —բաղիկը չի կարող յերկուսիս ել միասին տանի, ծանր կլինի:  
Զոկ ջոկ կտանի:

Եղպես ել անում է բարի թռչունը:

Զուրը վոր անց են կենում, ու մի քիչ ճանապարհ են գնում, անտառը հետզհետե ծանոթ է թվում, ու,



վերջապես, նկատում են իրենց հորական տունը: Եստեղ սկսում են վազել ինչքան վոտներում ուժ ունենին, ներս են թափվում ու ընկնում են իրենց հոր վզովը:

Հերներն ել մի հանգիստ ժամ չեր ունեցել են որվանից, ինչ յերեխանցը թողել է անտառում, իսկ խորթ մերը արդեն մեռել եր:


Գրետելը իր գոգնոցը բաց է թողնում ու միջի յեղածը հոր առաջին շուր տալիս, ենպես վոր մար-

գարիաներն ու անգին քարերը շաղ են անցնում տնու վը մին, իսկ մյուս կողմից ել Հենզելն՝ բուռնե բուռը հանում թափում իր գրպանից:

Եստեղ ել ամեն ցավ ու հոգս վերջանում են ու ապրում են միասին ուրախ ու անհոգ...

(1914)





### ԿԱՐՄՐԻԿԸ

Լինում ե չի լինում, մի  
փոքրիկ սիրուն աղջիկ ե  
լինում։ Ով մի անգամ տես-  
նում ե, սիրում ե ես աղջը-  
կ սնը, բայց ամենից շատ  
իր տատն ե սիրում։ Ել չի  
իմանում ինչ անի, վոր թո-  
ռան սիրաը շահած պահի,

Միր գլխարկ ե նվիրում։ Ես կարմիր գլխարկն ենքան  
ե սազ գալիս ես աղջկանը, վոր ել չի ուզում գլխին  
ուրիշ գլխարկ դնի բացի կարմրից։ Կարմիր շորեր  
ել հազցնում են, վոտից մինչև զլուխ կարմրում ե,  
դրա համար ել անունը դնում են Կարմրիկ։

Մի անգամ ել մերը Կարմրիկին ասում ե.

— Ա՛ռ ես գաթեն ու ես գինին տար տուր տատին,  
հիվանդացել ե, թուլացել ե, թող ուտի, խմի, մի քիչ  
ուժի գա։ Դե, քանի որը շոք չի, գնա, միայն կարգին,  
կամաց դնա, ճամփից ել չծովես, թե չե վեր կընկնես



շիշը կջարդես, ել տատի համար բան չի մնալ: Տատի մոտ ել վոր մտնես, չմոռանաս՝ տատին բարևս: Ենտեղ ել հանգիստ կաց, դես դեն չվազվղես:

— Հա, մարիկ, ինչպես ասում ես, ենպես կանեմ, — խոսք ե տալիս Կարմրիկն ու գնում:

Տատն ապրելիս ե լինում գյուղից մի կես ժամ հեռու, անտառի մեջ: Կարմրիկը հենց անտառն ե մտնում թե չե, դեմք դուրս ե գալիս մի գել: Բայց Կարմրիկը չի իմանում, թե գելն ինչ սարսափելի կենդանի յե, ու իսկ չի յել վախենում:

— Բարնվ, Կարմրիկ, — ասում ե գելը:

— Բարով, Գեղախակեր:

— Եսպես վաղ-վաղ մւր ես գնում, Կարմրիկ,

— Գնում եմ տատիս մոտ:

— Եդ ի՞նչ ես տանում գոզնոցումդ:

— Դաթա ու գինի յեմ տանում: Մենք յերեկ գաթա թխեցինք՝ տատիկս հիվանդացել ե, թուլացել ե, տանում եմ, վոր գաթեն ուտի, գինին ել խմի՝ ուժի գա:

— Քու տատը վժրտեղ ե ապրում:

— Անտառում, մի քառորդ ժամի ճամփա յել կամինչկ ենտեղ: Ենտեղ յերեք կաղնի ծառ կա, են ծառերի տակին ե նրա տունը, այ են, վոր չորս կողմն ել տկողնի ցանկապատ ունի: հիմի կարելի յե հիշես: Կարմրիկն եսպես խոսում ե, իսկ գելը իրան-իրան միտք ե անում.

— Ես փոքրիկ, քնքույշ աղջիկը ի՞նչ անուշ պատառ ե...սա ավելի համով կլինի, քան թե պառավը: Ապա, քեզ տեսնեմ, մեր տղա, բանն ենպես խելքով բռնի, վոր ջուխտն ել ճանկդ գցես:

Մի քիչ Կարմրիկի հստ գնում ե ու ասում:

— Մի դեսը մտիկ արա ե, Կարմրիկ, տես ի՞նչ հիանալի ծաղիկներ են փոված մեր չորս կողմը: Մի չես կանգնում ու չես հիանում սրանցով: Մի լոիր, տես թռչուններն ի՞նչ ուրախ յերգում են, չենց ուղիղ քշած, սուս ու փուս գնում ես, կարծես թե ուսումքշած, սուս ու փուս գնում ես, կարծես թե ուսումքշած, սուս ու փույնոգույն անհամար ծաղիկները: Մաքում ասում ե

Եստեղ գլուխը վեր ե քաշում Կարմրիկը, չորս կողմն աչք ածում, տեսնում ե ծառերի տերեկների արանքից եստեղ-ենտեղ ներս են թափանցում ու խաղում են արևի շողքերը, իսկ կանաչ խոտի մեջ ցրիկ բարձրանում են գույնոգույն անհամար ծաղիկները: Մաքում ասում ե

— Տատի համար վոր մի փունջ ծաղիկ ել տանեմ հո շատ կուրախանա: Դեռ ժամանակ ել կա, կհամեմ...

Ասում ե, ճամփից դուրս ե գալիս անտառն ընկը նում ու սկսում ծաղիկ քաղել: Մինը պոկում ե, տեսնում ե նրա կողքին ավելի գեղեցիկն ե ծաղկում, հինում մի յել են կողմն ե վազում. եսպիսով ել ավելի ու ավելի հեռու, անտառի խորքն ե մտնում:

իսկ ես ժամանակ գելը կարճ ճամփով տատի տունն ե հասնում ու դուռը ծեծում:

— Եդ մի ե:

— Կարմրիկն եմ, քեզ համար գինի ու գաթա յեմ բերել, դուռը բաց արա:

— Դուան փակիչն հուպ տուր, կբացվի, — ներսից ձեն ե տալիս տատը: — Ձես թույլ եմ, չեմ կարող վեր կենալ:

Գելը դռան փակիչն հուպ ե տալիս, դուռը յետ ե բացվում: Լուս հարձակվում ե անկողնի վրա ու պա-

ուավին վողջ-վողջ կուլ տալիս: Հետո նրա շորերը  
հագնում ե, նրա գլխակապիչը կապում, անկողնում  
պառկում ու վերմակը քաշում վրեն:

Իսկ կարմրիկն ենտեղ մի ծաղկից մյուս ծաղիկն ե  
վազում, ու յերբ վոր ենքան շատ-շատ ծաղիկ ե քա-  
ղում, վոր տեսնում ե ել չի կարող տանի, նոր տատը  
միան ե ընկնում. դարձյալ ընկնում ե ճամփեն, զա-  
զում դեպ տատի տունը:

Վոր համնում ե տատի տունը, դարմանում ե, թե  
դուռն ինչու յե կրնկի վրա բաց:

Ներս ե մտնում, սիրտը մի վախ ե ընկնում:  
Ասում ե, «Տեր աստված, միշտ իմ տատի մոտ ենպես  
լավ եր, եսոր ինչու յեմ եսպես վախենում...»: Մտքումն  
եսպես ե ասում ու ձեն ե տալիս.

— Բարի լուս, տատի ջան:

Պատասխան չկա: Մոտենում ե տատի անկողնին,  
վերմակը յետ ե քաշում: Տեսնում ե տատը պառկած  
ե, բայց չի իմանում ինչու—գլխակապիչը ներքեւ ե  
քաշել ու ենպես տարորինակ ե նալում, վոր...

— Վայ, —ասում ե, —տատի, եղ ինչ ահագին ականջ-  
ներ ունես...

— Ես նրա համար ե, վոր քեզ լավ լսեմ, բալիկս...

— Վայ տատի, եղ ինչ ահագին աչքեր ունես...

— Ես նրա համար ե, վոր քեզ լավ տեսնեմ, բա-  
լիկս...

— Վայ, տատի, եղ ինչ ահագին ձեռներ ունես...

— Ես նրա համար ե, վոր քեզ ավելի լավ գրկեմ,  
բալիկս...

— Բայց, տատի, եղ ինչ սարսափելի մեծ բերան  
ունես...

— Իսկ ես նրա համար ե, վոր քեզ շուտով ուտեմ...  
Ասում ե գելն ու տեղիցը ներքեւ թռչում, ձեռաց  
կուլ տալիս խեղճ կարմրիկին:

Սրան ել կուլ ե տալիս, կշտանում ե ու նորից  
անկողնում պառկում, խոմֆացներով քնում: Հենց ես  
ժամանակ, դու մի ասիլ, մի վորսկան եղ պառավի  
տան մոտից անց ե կենում: Ասում ե.

— Ես պառավիլ ինչու յե եսպես խոմֆացնում, մի  
տեսնեմ, չինի թե հետը մի բան ե պատահել...

Ներս ե մտնում, մահճակալին մոտենում, տեսնում  
ե պառավիլ տեղը պառկած ե գելը:

— Հը, վերջապես ճանկս ընկար, անիծված, վա-  
ղուց ելի քեզ ման գալիս:

Ասում ե վորսկանն ու մին ուզում ե հրացանով  
զարկի, մին ել մտածում ե, թե կարելի յե պառավին  
կուլ ե տվել ու կարելի յե դեռ նրան վրկելը ել հրա-  
ցանով չի զարկում, զանտկը առնում ե ու սկսում ե  
փորը ճղեր: Մի քիչ ճղում ե թե չե, մի կարմիր  
գլխարկ ե յերեսում, մի քիչ ել ճղում ե—կարմրիկը  
կենդանի-կենդանի դուրս ե թռչում ու կանչում.

— Վայ, ինչքան վախեցա...ինչ մութ եր գելի  
փորումը...

Նրա յետկից ել տատն ե դուրս գալիս, նա ել եր  
դեռ կենդանի, բայց դժար եր շունչ քաշում:

Եստեղ կարմրիկը շտապով մեծ-մեծ քարեր ե հա-  
վաքում, են քարերով բերում են գիլի փորը լցնում:  
Գելը զարթնում ե, ուզում ե տեղիցը թռչի, դուրս  
վախչի, բայց քարերից ենքան ծանրացել եր, վոր  
տեղն ու տեղը վեր ե ընկնում, գետնովը դիպչում,  
սատկում:

Ամենքն ել ենպես ուրախանում են, ենպես ուրախանում են, վոր ել լեզվով ասել չի լինի: Վորսկանը գիլի մորթին պոկում ե, վեր կալնում գնում, պառաշը նստում ե, սկսում ե Կարմրիկի բերած գաթեն ուտել, գինին խմել ու քիչ-քիչ ուժի գալ, իսկ Կարմրիկը մտածում ե.

— ԶԵ, ես մինը բավական եր, ել յերբեք ճամփից դուրս չեմ գալ ու մենակ անտառն ընկնիւ, յերբվոր մայրիկը չի թողնում:

Ասում են սրանից յետը մի անգամ ել Կարմրիկը յերբ վոր իր տատի համար թխվածք ե յեղել տանելիս, մի ուրիշ գել ե ուղեցել նրան համոզի, վոր ճամփիցը դուրս գա: Բայց Կարմրիկը զգուշացել ե ու իր ճամփեն ե գնացել: Յերբ վոր տատի մոտ ե հասել՝ պատմել ե, թե հապա՞ ենպես մի գել պատահեց ինձ ճամփին, բարեց բաց ենպես չար աչքով եր նայում, վոր թե ճամփի մեջ չլինելինք, հավատա, թե ինձ ուտեր... Տատն ասել ե.

— Վայ, Կարմրիկ ջան, կաց դուռը փակենք վոր չլինի թե եղ գելը գա հանկարծ:

Մի քիչ կենում են, տեսնում են գելը դուռը ծեծում ե ու ձեն ե տալիս.

— Տատի, դուռը բաց արա, յես Կարմրիկն եմ, քեզ համար գաթա յեմ բերել...

Տատն ու Կարմրիկը վոչ պատասխան են տալիս, վոչ դուռը բաց են անում: Սրանից յետը գելը մի քանի անգամ ել տան չորս կողմովը պտույտ ե տալիս ու բարձրանում կտուրը: Ենտեղ սպասում ե, թե յերբ պետք ե իրիկունը Կարմրիկը դուրս գա իրենց

առւնը գնալու, վոր բռնի ուտի: Տատը գլխի յե ընկենում նրա մտքինը:

Դուանը, հենց տան պատի տակին մեծ կոթ ե լինում ջրով. Կարմրիկին ասում ե.

— Կարմրիկ ջան, եստեղ մսի խաշու<sup>1)</sup> կա վեր կալ ես խաշուն, տար ածա կոթի մեջը:

Կարմրիկը մսի խաշուն տանում ե ածում դռան մեծ կոթի մեջը, ենքան, վոր կոթը պոնդեապունդ լցվում ե:

Ես խաշվի հոտը վեր ե բարձրանում ընկնում գիշելի քիթը: Գելը փնչացնում ե, վերեկց սկսում ե ծիկլակել, թաքուն նայել դեպի ներքե, վիզը ձգնւմ ե, ձգնւուս, ենքան ձգում ե, վոր ել չի կարողանում իրան պահի, թրը՝ մփ, ընկնում ե ուղիղ կոթի մեջը՝ խեղղվում: Կարմրիկն ել ուրախուրախ վեր ե կենում գնում իրենց տունը. են ե լինում են, ել ճամփին վոչ վոք ձեռք չի տալիս նրանք

1) Խաշու—յեփած մսի ջուր:



## ՄՈԽՐՈՏԸ

Մի հարուստ մաքուր կին հիվանդանում եւ Յնունում եւ մահը մոտենում եւ կանչում եւ իր մինուժարապղկանը, ասում եւ.

— Զավակս, յեղիք լավս ու բարի, են ժամանակ աստված միշտ քեզ կլսի, յես ել յերկնքից մտիկ կանեմ քեզ ու անբաժան քեզ հետ կլինեմ:

Ասում եւ ու արեն ապրողներին բաշխում, մեռնում: Աղջիկն ամեն որ գնում եւ մոր գերեզմանի վրա լաց լինում եւ միշտ լավս ու բարի:

Չմեռը գալիս եւ, ձյունը սպիտակ սավանով ծածկում եւ մոր գերեզմանը, իսկ գարնան արևը շողալուն պես հերը յետնակին<sup>1)</sup> եւ ուզում, աղջկա համար խորթ մեր եւ բերում: Խորթ մերն ել իրեն հետ յերկու աղջիկ եւ բերում, դրսից սիրուն ու սպիտակ, ներսից չար ու սևահոգի: Ու խորթ աղջկա համար սկսվում են սե որերը:

1) Յետնակին—յերկըորդ, բերուրդ...կինը:

— Միթե ես կուռկուռն<sup>1)</sup> ել մեղ հետ միասին պետք եւ տանը պարապատարապ նստի: Ով ուզում եւ հաց ուտի—պետք եւ աշխատի:—Ասում են խորթ քուչը բերն ու տանիցը դուրս են անում, քշում խոհանոցը: Լավ շորերն ու կոշիկները հագիցը հանում են, հին գուրչեր<sup>2)</sup> ու փետե վոտնամաններ են հազցնում. ծափ են տալիս՝ վրեն ծիծաղում.

— Մի ես իշխանուհուս մտիկ արեք եւ, տեսեք՝ վոնց եւ զուքվել, զարդարվել...

Խեղճ աղջիկն առավոտից մինչև իրիկուն պետք եւ խոհանոցում չարչարվեր: Առավոտը ծերին պետք եւ վեր կենար ջուր կրեր, կրակ աներ, կարեր, կարկատեր, յեփեր, թափեր: Խորթ քուցրերն ել շարունակ նրան վշտացնում եյին ու վիրավորում, ծաղրում եյին, ընտրած վոստի ու սիսեռը շաղ եյին տալիս, մոխիրն ելին ածում, ու նա նորից պետք եւ նստեր հատիկ-հատիկ հավաքեր:

Իրիկուններն ել յերբ վոր բանը վերջացնում եր, անկողին չուներ, կրակի առաջին՝ մոխիրի վրա յեր պառկում: Դրանից ել միշտ մոխրոտ եր լինում ու դրա համար ել քույրերն ավել անունը դրին Մոխրոտ:

Մի անգամ ես Մոխրոտի հերը, ուրիշ տեղ գնալիս, խորթ աղջիկներին հարցնում եւ, թե՞ ինչ եք ուզում, վոր ձեղ համար բերեմ: Մինն ասում եւ.

— Ինձ համար սիրուն շորեր բեր: Մյուսն ել, թե.

— Ինձ համար մարգարտե մանյակ բել:

— Իսկ դու, Մոխրոտ ջան, դժւ ինչ կուզես, վոր քեզ համար բերեմ:

1) Կուռկուռ—հնդկահավ:

2) Գուրչ—հին, մաշված շոր:

**Մոխրոտն ել ասում ե.**

— Հայրիկ, են ծառի ճյուղը, վոր վերադարձիդ  
կդիպչի քո գլխարկին, են ճյուղը կտրի ու բեր ինձ  
համար:

Հերը գնում ե, խորթ աղջիկների համար լավ շո-  
րեր ե առնում, մարգարտե մանյակ ու թանկագին  
քարեր ե առնում ու ճամփիա ընկնում դեպի տուն:  
Վերադարձին մի ծմակով անց կենալիս մի ընկուղե-  
նու ճյուղ դիպչում ե գլխարկին՝ գլխարկը վեր դցում:  
Են ճյուղն ել կտրում ե հետը վերցնում, վոր Մոխ-  
րոտին տա: Տուն ե հասնում, խորթ աղջիկների ուղածն  
իրենց ե տալիս, ընկուղենու ճյուղն ել տալիս ե Մոխ-  
րոտին: Մոխրոտը շնորհակալ ե լինում հորից, տա-  
նում ե են ընկուղենու ճյուղը մոր գերեզմանի վրա  
տնկում ու լաց ե լինում: Ենքան լաց ե լինում, ենքան  
լաց ե լինում, վոր արտասուրով են տնկած ընկուղե-  
նու ճյուղը ջրում ե: Ու ընկուղենու ճյուղը դուրս ե  
գալիս, մեծանում, մեծ ծառ ե դառնում:

Մոխրոտը որը յերեք անգամ գնում ե են ծառի  
տակ լաց ե լինում ու աղոթք անում: Ամեն անգամ  
ել մի ճերմակ թռչուն գալիս ե են ծառին վեր գալիս  
ու՝ Մոխրոտն ինչ վոր սրտով ուղում ե, են սրտով  
ուղածը վերեից դցում ե ներքեւ:

Եի անգամ ել թագավորը մի հանդես ե սարքում,  
վոր յերեք որ յերեք գիշեր պետք ե քաշեր: Իր տե-  
րության բոլոր գեղեցիկ աղջիկներին հրավիրում,  
հավաքում ե են հանդեսին, վոր իր աղեն նրանց մի-  
ջիցը իրեն համար հարսնացու ընտրի: Խորթ քույրե-  
րը վոր իմանում են իրենք ել են հրավիրված, ուրա-

խանում, աշխարհքով մին են լինում, Մոխրոտին ձեն  
են տալիս.

— Արի, Մոխրոտ, արի, մեր մազերը սանրի, մեր  
կոշիկները սրբի, մեր կոճակները մեր գցի, գնում  
ենք թագավորի պալատը խնձույքի:

Ինչ վոր ասում են, ամեն բան Մոխրոտը կատա-  
րում ե, բայց սիրոն ուզում ե, վոր ինքն ել պար  
գա, ինքն ել ուրախանա. Խորթ մորը խնդրում ե,  
վոր իրեն ել հետները տանեն պալատը:

— Ըստ, հողեմ գլուխդ, — ճշում ե խորթ մերը, —  
ակաս-մակաս՝ եղ մոխրոտ տեղովդ դու եյիր պակաս  
թագավորի պալատում: Վոչ հագիդ հագուստ ունես,  
վոչ վոտիդ վոտնաման, դու ել ես ուղում պալատու-  
մը պար գմաս, տո Մոխրոտ:

Դեռ եղակես խնդիրքը մերժում ե, վերջն ասում ե.

— Դե լավ, մի աման վոսպ եմ ածել մոխրոտ, յեր-  
կու ժամումը թե կջոկես՝ հետներս քեզ ել կտանենք,  
թե չե հո՛ չենք տանիլ:

Մոխրոտն ես լսում ե թե չե, յետեի դոնիցը դուրս  
ե թռչում պարտեզն ու կանչում.

«Իմ ընկերներ, աղունակներ,  
Յերկընքի տակ թռչող հավքեր,  
Թուեք, յեկեք ամեն կողմից,  
Վեր քաղեցեք վոսպը մոխրից.  
Լավի՝ ամանը, վատը՝ ձեղ կեր,  
Իմ ընկերներ, թռչուն հավքեր»:

Ես ասելու ե լինում: Մին ել են ե տեսնում՝ խո-  
հանցի լուսամուտից յերկու ճերմակ աղավնի ներս  
ընկան, նրանց յետեից տատրակները, տատրակների

յետեից ել մնացած թոշունները։ Ծըլվըլալով իջնում  
են ուղիղ մոխրի վրա ու, կը՝ տ-կը՝ տ, կտուցներով  
սկսում են վոսպը մոխրից վեր քաղել, վատերն ուտել,  
լավերն ածել ամանի մեջ։  
Մի ժամ ել չի քաշում՝ բո-  
լոր վոսպը ջոկում, հավա-  
քում են, յետ թոշում գնում։  
Մոխրոտը ամանն առնում  
ե, ուրախ-ուրախ տանում



տալիս խորթ մորը, ասում ե՝ հիմի ինձ ել հետը  
կտանի, Խորթ մերն ասում ե.

— Զե, չեմ տանիլ, վոչ հազիր հազուստ ունես,  
վոչ վոտիդ վոտնաման. ի՞նչպես պետք ե պալատում  
պար գաս։ Դու խաղք ու խայտառակ կլինես, մենք  
ել քեզ հետ։

Մոխրոտը լաց ե լինում։ Են ժամանակ խորթ մերն  
ասում ե.

— Դե լավ, յերկու աման վոսպը մի ժամում թե  
մոխրիցը ջոկեցիր՝ հետներս կտանենք, թե չե՝ հո չե։  
Մտքումն ել ասում ե՝ «Ես հո խսկի չի կարող անի»։

Յերկու աման վոսպն ածում ե մոխրը, իսկ Մոխ-  
րոտը յետեի գոնից պարտեղն ե վազում։

«Իմ ընկերներ, աղունակներ,  
Յերկընքի տակ թըռչող հավքեր  
թըռեք, յեկեք ամէն կողմից,  
վեր քաղեցեք վոսպը մոխրից.  
Լավն՝ ամանը, վատը՝ ձեզ կեր,  
իմ ընկերներ, թըռչուն հավքեր»։

Կանչում ե թե չե, խոհանոցի լուսամուտից թըռ-  
թըռալով յերկու ձերմակ աղավնի յեն ներս ընկնում,  
նրանց յետեից տատրակները, տատրակների յետեից  
ել մնացած թոշունները։ Ծըլվըլալով իջնում են մոխ-  
րի վրա ու, կը՝ տ-կը՝ տ, կտուցներով սկսում են վոս-  
պը մոխրից վեր քաղել, վատերն ուտել, լավերն ածել  
ամանի մեջ։ Մի ժամ ել չի քաշում, բոլոր վոսպը  
ջոկում, հավաքում են, յետ թոշում գնում։ Մոխրոտը  
ամանն առնում ե, ուրախ-ուրախ տանում տալիս խորթ

մորը, ասում ե՞ հիմի անպատճառ ինձ ել կտանի հետքը: Խորթ մերն ասում ե.

— Ինչ ուզում ես արա, մին ե, քեզ հետներս չենք տանելու, վոչ հագիդ հագուստ ունես, վոչ վոտիդ վոտնաման, ինչպես պետք ե պալատում պար գաս: Դու խաղք ու խայտառակ կլինես, մենք ել քեզ հետ: Ասում ե, յերեսը շուռ տալիս իր յերկու գոռող աղջիկներին առնում գնում:

Մոխրոտը տանը մնում ե մենմենակ: Վեր ե կենում գնում մոր գերեզմանի վրա, ընկուզենու տակին կանգնում ու կանչում.

— Ժաժ յԵկ, իմ ծառ, ձըգիր զառվառ  
Վոսկի-արծաթ շոր ինձ համար:

Կանչում ե թե չե՞ ձերմակ թոչնակը ծառի վրիցը վոսկեկար ու արծաթակար մի ձեռք շոր ու վոտնամաններ ե գցում ներքեւ: Մոխրոտն իսկույն հագնում ե ու շտապում պալատը: Արծաթակար ու վոսկեկար զգեստը հագին՝ ենքան գեղեցիկ ե լինում, վոր խորթ մերն ու քույրերը չեն ճանաչում: Ասում են՝ ով գիտի ինչ թագավորի աղջիկ ե: Մոխրոտն իսկի մտքներովն անց ել չի կենում, ասում են՝ հիմա նա տանը նստած, կեղտոտ-կեղտոտ, մոխրիցը վոսպն ե ջոկում:

Թագավորի տղեն վոր տեսնում ե, իսկույն դեմի ե գալիս, ձեռիցը բռնում ե, հետը պար ե գալիս. ու ել ձեռը ձեռիցը բաց չի թողնում:

Եսպես մինչեւ իրիկուն պար ե գալիս, իրիկունն ել, վոր ուզում ե տուն գնա, թագավորի տղեն ասում ե.

— Յես քեզ ճանապարհ կդնեմ:

Շատ ե ուզում իմանալ, թե ով ե են գեղեցկուհին, ինչ տանից ե, ում աղջիկն ե: Բայց ճամփին Մոխրոտը հանկարծ թոչում ե մտնում իր հոր աղավնոցը, կորչում: Թագավորի տղեն սպասում ե, մինչեւ վոր Մոխրոտի, հերը գալիս ե: Ասում ե՝ են անծանոթ գեղեցկուհին քո աղավնոցը մտալ:

Ծերունին միտք ե անում: — Զլինի թե մեր Մոխրոտն ե ես գեղեցկուհին...

Աղավնոցը քանդում են, տակն ու վրա յեն անում, վոչ Մոխրոտ կա, վոչ ուրիշ ոքմին:

Դու մի ասիլ՝ Մոխրոտը մի կողմից աղավնոցի գլուխն ե բարձրացել, մյուս կողմից ներքեւ թռել ու մի ակնթարթում ընկուզենու տակ կանգնել: Ենտեղի իր ճոխ զգեստները հանել ե գրել մոր գերեզմանի վրա ու թոչնակը յետ ե տարել, իսկ ինքը վազել ե խոհանոց՝ նորից մոխրի վրա պառկել: Խորթ մերն ու աղջիկներն ել գալիս են տեսնում ինչպես վոր թողել են, ենպես ել Մոխրոտը՝ գուրչերը հագին՝ մոխրի վրա պառկած, կողքին ել ձեթի ճրագը մխում ե:

Մյուս որը հանգեսն ել յետ նորոգվում ե: Հերը, խորթ մերն ու քույրերը դարձաւ նոր շորեր են հագնում ու գնում, իսկ Մոխրոտը շտապում ե իր ընկուզենու տակն ու կանչում ե.

— Ժաժ յԵկ, իմ ծառ, ձըգիր՝ զառվառ  
Վոսկի-արծաթ շոր ինձ համար:

Ճերմակ թոչնակը առաջվանից ավելի գեղեցիկ մի ձեռք շոր ե գցում ներքեւ: Ես շորերը հագին Մոխրոտը վոր չի հայտնվում ինչույքում շափաղը պալատի պատերովն ե տալիս, հանդիսականները մնում են բե-

ըանները բաց: Դու մի ասիլ՝ թագավորի տղի աչքն  
ել հենց ճամփին և լինում: Տեսնում ե թե չե՛ դեմն ե  
վազում, ձեռիցը բռնում ե տանում ու միմիայն նրա  
հետ ե պարում շարունակ: Ուրիշ պարեկներ ել վոր  
մոտենում են, ասում ե՛ չե, իմ պարզնկերը սա յե,  
միայն սրա հետ պետք ե յես պար դամ:

Ել յետ մութը վոր ընկնում ե, աղջիկն ուզում ե  
գնա իրենց տունը: Թագավորի տղեն յետիցը գնում  
ե, վոր աչքով պահի, տեսնի թե ում տունն ե մտնում:  
Մոխրոտը վազում ե ընկնում իրենց տան յետեկի  
պարտեղը: Պարտեղում մի տանձենի յե լինում, լիքը  
հասած, հրաշալի տանձերով: Սկյուռի նման ճարպիկ  
են ծառն ե բարձրանում ու ճյուղերի արանքում են-  
պես ե կորչում, վոր թագավորի տղեն չի յել կարո-  
ղանում նկատի, թե վորտեղ թագնվեց: Սպասում ե,  
մինչև Մոխրոտի հերը գալիս ե: Ասում ե.

— Են անձանոթ աղջիկը ել յետ աչքիցս թուալ  
ու, կարծես թե՝ ես ձեր տանձենուն բարձրացավ...

Հերը միտք ե անում.—Չինի թե ես մեր Մոխ-  
րոտն ե...:

Հրամայում ե, կացինը բերում են, տանձենին  
կտրում են՝ վրեն վոչվոք չկա: Մանում են խոհանո-  
ցը, ինչպես միշտ, դարձյալ մոխրի վրա պառկած ե:  
Դու մի ասիլ՝ ծառի մի կողմից բարձրացել ե, մյուս  
կողմից իջել, լավ շորերը տարել ե տվել թոչնակին,  
հին գուրչը հագել ու ել յետ յեկել մոխրի վրա պառկել:

Ցերբորդ անգամն են տանեցիք գնում ինջույք:  
Մոխրոտն ել յերբորդ անգամ վազում ե մոր գերեզմա-  
նի վրա, իր ընկուղենու տակ կանգնում ե ու կանչում.

— Ժաժ յեկ, իմ ծառ, ձըգիր զառշվառ  
Վոսկիւարծաթ շոր ինձ համար:

Ես անդամ ճերմակ թոչնակը մի են տեսակ ճոխ  
ու շքեղ զգեստ ե գցում ներքի, վոր աշխարհքում  
հողեղեն սարդը վոչ ունեցել ե, վոչ կունենա: Իսկ  
վոտնամանները՝ զուտ վոսկուց:

Ես զգեստը հագին, զուրված-զարդարված վոր հան-  
գեսի մեջ զուրս ե գալիս՝ ամենքն ել արմանքից ու  
զարմանքից քշվում, վերանում են: Իսկ թագավորի  
տղեն սկսում ե հետը պարել, շարունակ պարել ով  
վոր ել մոտենում ե, ասում ե.


— Զե, մենակ յես պետք ե պարեմ սրա հետ...

Ել յետ վոր մութն ընկնում ե, Մոխրոտն ուզում  
ե՞զնա, թագավորի տղեն ել ուզում ե ուղեղցի. բայց  
ենպես ձեռաց սահում ե ու չքանում, վոր տղեն չի  
յել կարողանում յետեկցը հասնի: Միայն թե թագա-  
վորի տղեն ես անդամ խորամանկություն եր բանեց-  
րել: Հրամայել եր, վոր պալատի սանդուխքները ձյու-  
թեն: Սանդուխքները ձյութած են լինում ու, շատապ  
իջնելու ժամանակ, աղջկա ձախ վոտնամանը կպչում  
ե սանդուխքին, մնում:

Թագավորի տղեն վոտնամանը վերցնում ե ու  
վրեն զարմանում, թե ինչքան ե փոքրիկ ու ինչքան  
ե սիրուն, են ել զուտ մաքուր վոսկուց:

Մյուս որը վեր ե կենում, վոտնամանն առնում,  
գնում Մոխրոտի հոր մոտ: Ասում ե՝ կա թե չկա, նա  
պետք ե լինի իմ կինը, ում վոտին ես վոտնամանը կզա:

Խորթ քույրերը ուրախանում են: Իրենք ել փոք-  
րիկ, սիրուն վոտներ են ունենում: Մեծ քույրն իս-



կույն խընդմընդալով իր սենյակն ե վազում. մերը կողքին կանգնում ե, ինքը վոտնամանը վոտի վրա փորձում ե: Փորձում ե, բայց փոքր ե գալիս, ինչ անում ե չի անում, մեծ մատը վոչ մի կերպ ներս չի գնում: Մերը դանակը հանում ե իրեն ե տալիս, ասում ե.

Ա՛ռ, մեծ պճեղդ կտրի. վախիլ մի, վոր թագուհի դառնաս՝ վոտով հո չես ման գալու: Աղջիկը դանակն առնում ե, մեծ պճեղը կտրում, վոտը կոխում ե վոտնամանի մեջ ու, մի կերպ ցալին հաղթելով, դուրս ե գալիս թագավորի տղի մոտ:

Թագավորի տղեն ասում ե՝ իմ հարսնացուն սայե, վոր կա: Ես՝ աղջկանը գալիքն ե առնում, ձին քշում: Բայց ճամփին են գերեզմանի մոտից անց կենալիս ընկուղենու վրից յերկու մերմակ աղավնի կանչում են:

Դու, դու, տղա, չես նըկատում,  
Վոնց ե վոտից արյուն կաթում.  
Փոքր ե վոտին վոտնամանը,  
Քո հարսնացուն մընաց տանը:

Եստեղ թագավորի տղեն մտիկ ե անում, տեսնում ե՝ աղջկա վոտնամանից արյունը ծորելով գնում ե: Զիու գլուխը յետ ե շուռ տալիս, ես աղջկանը յետ ե տանում, ասում ե՝ սա իմ հարսնացուն չի, թող մյուս քույրը փորձի տեսնենք:

Յերկուրդ քույրն ե վազում իր սենյակը, վոր վոտնամանը վոտին փորձի: Պճեղները լավ են գնում, բայց սրա յել կլունկն ե մեծ դուրս գալիս: Մերը դանակը հանում ե իրեն տալիս, ասում ե.

— Առ, կրնկիցդ մի քիչ կտրի, վախիլ մի՛, վոր  
թագուհի դառնաս, վոտով հո չե՞ս ման դալու:

Աղջիկը կրնկից մի քիչ կտրում ե, վոտը մի կերպ  
վոտնամանի մեջ ե կոխում ու, ցավին զոռելով, դուրս  
ե գալիս թագավորի տղի մոտ:

Թագավորի տղեն ասում ե, հիմի արդեն գտա, սա  
յե իմ հարսնացուն, վոր կա: Զին նստում ե, աղջկա-  
նը գավակն ե առնում ու քշում:

Գերեզմանի կողքից անց կենալիս ընկուզենու վրից  
են յերկու աղունակներն ել յետ կանչում են.

— Ղու, ղու, տղա չե՞ս նըկատում,  
Վոնց ե վոտից արյուն կաթում.  
Փոքր ե վոտին վոտնամանը,  
Քու հարսնացուն մընաց տանը:

Թագավորի տղեն մտիկ ե անում, տեսնում՝ ար-  
յունը դուրս ե ծորում աղջկա սպիտակ գուլպաների  
տակից ու վոտնամանից կաթկթում: Զիու գլուխը յետ  
ե շուռ տալիս, կեղծ հարսնացուին ել յետ բերում  
իրենց տունը: Ասում ե.

— Սա յել չի իմ իսկական հարսնացուն: Դուք ել  
ուրիշ աղջիկ չունեք...

Հերն ասում ե.

— Զե, ել ուրիշ աղջիկ չունենք: Ճշմարիտ ե, իմ  
առաջվա կնկա մահից հետո մի փոքրիկ աղջիկ մնաց,  
վոր մենք Մոխրոտ ենք ասում, բայց դե նա ձեղ վայել  
հարսնացու չի: Վճրտեղից վորտեղ...

Թագավորի տղեն ուզում ե անպատճառ Մոխրոտին  
տեսնի:

— Զե, աման,—ասում ե խորթ մերը. — նա ենպես  
կեղտոտ ե, վոր վրեն մտիկ անել չի լինում:

Բայց թագավորի տղեն կանգնում ե, թե՝ ինչ  
ուզում ե լինի, պետք ե տեսնեմ,—ու ձեն ե տալիս,  
Մոխրոտին կանչում:

Մոխրոտը, յերեսն ու ձեռները շարմաղ լվացած,  
դուրս ե գալիս, գլուխ տալիս թագավորի տղին: Սա  
յել վոսկի վոտնամանը նրան ե տալիս, վոր վոտին  
չափի:


Տեղն ու տեղը նստարանի վրա նստում ե, վիետե  
կոսկիտ վոտնամանները հանում, վոսկի վոտնամանը  
հագնում: Ենպես ե վոտին գալիս, վոնց վոր հալած-  
թափած: Վոր վոտի յե կանգնում ու ժպտալով թա-  
գավորի տղի աչքերի մեջ նայում, թագավորի տղեն  
հանկարծ ճանաչում ե, տեսնում ե սա հենց են գեղեց-  
կուհին ե, վորի հետ ինքը պարեւմ եր ու վորին ման  
ե գալիս:

— Ահա,—ասում ե,—վերջապես գտա իմ իսկական  
հարսնացուն:

Խորթ մերն ու իր աղջիկները վախից վեր են  
թռչում, նախանձից ու ցավից են քաթանի պես գու-  
նատվում: Թագավորի տղեն իր ձին հեծնում ե, Մոխ-  
րոտին գավակն առնում ու թռչում դեպի իր պալա-  
տը: Մոխրոտի մոր գերեզմանի մոտից անցնելիս՝ ըն-  
կուղենու վրից են յերկու ձերմակ աղունակները  
մնչում են.

— Ղու, ղու, տղա, չե՞ս նըկատում,  
Ել արյուն չի վոտից կաթում.  
Վոտնամանը վոտինն ե բուն,  
Բարով տանես քո հարսնացուն:

Եսպես մնչում են, հետո ցած են թռչում, մինը  
Մոխրոտի աջ ուսին ե բազմում, մյուսը ձախ ուսին,  
Ու եղան ել մնում են:



Հարսանիքի ժամանակ Մոխրոտի խորթ քույրերն  
ել են գալիս, վոր իրենց վրա յել կաթի նրա բախտի-  
ցը, ու իրեւ թե ուրախանում են: Պսակ գնալիս մեծը  
Մոխրոտի աջ կողմն ե կանգնում, փոքրը ձախ կողմը,  
ու աղունակները մեծի աջ աչքն են հանում, փոքրի  
ձախ աչքը: Պսակից յետ գալիս մեծը ձախ կողմն ե  
անցնում, փոքրն աջ կողմը: Ես անգամ ել աղունակ-  
ները մեծի ձախ աչքն են հանում, փոքրի աջ աչքը,  
ու թողնում: Ու եսպես, յերկուսն ել իրենց չարու-  
թյունից կուրանում են, ու ամբողջ իրենց կյանքում  
ել մնում են կույր:

(1915)



## ՃԵՐՄԱԿ ՈՉԸ

Մեղանից շատ առաջ մի իմաստուն թագավոր ե  
լինում: Վոչ մի բան չի մնում նրանից ծածուկ. ամե-  
նազաղանի բաների մասին ել կարծես թե քամին  
նրան տեղեկություն եր տալիս: Ես թագավորը մի  
տարորինակ սովորություն ե ունենում, ամեն ճաշի,  
յերբ սեղանը վեր են քաղում, ծառան մի ծածկած  
աման ե ներս բերում, ու թագավորը ամանը բաց չի  
անում, մինչեւ վոր ծառան ել չի գնում ու ինքը չի  
մնում մեն-մենակ:

Եսպես քաշում ե բավական ժամանակ: Մի անգամ  
ել ես տանող ծառային ենակես մի հետաքրքրություն  
ե տիրում, վոր ել չի կարողանում ինքն իրեն դիմագրի,  
ամանը առնում ե տանում ե իրեն սենյակը: Սենյա-  
կի դուռն զգուց դնում ե, ամանի խուփը յետ քաշում:  
Տեսնում ե՝ միջին մի յեփած ճերմակ ոձ: Ել չի կա-  
րենում իրեն պահի, մի կտոր կտրում ե դնում բերա-  
նը: Լեղվին ե տալիս թե չե-հանկարծ պատուհանի  
տակից մի զվարթ զըմկըժոց ե լսում: Ականջ ե գնում,  
տեսնում ե ճնճղուկներ են, զրոյց են անում, զանա-  
զան պատմություններ են պատմում անտառներից ու  
դաշտերից:

Դու մի ասիլ՝ ես մեր ծառան ոձի միսն ուտելուն  
պես կենդանիների լեզուն հասկանալու շնորհք եստացել:

Ենպես ե պատահում, վոր հենց եղ ժամանակ թա-  
գուհու հրաշալի մատանին կորչում ե, ու կասկածն  
ընկնում ե ես նույն հավատարիմ ծառայի վրա, վոր  
ամեն տեղ ազատ յել ու մուտք ուներ: Ասում են՝ կա-  
չկա, սա յե գողացել մատանին:




Թագավորը ծառային կանչում ե իր մոտ, սպառ-  
նում, վոր յեթե մինչև մյուս որը գողիանունը չը տա,  
ելուխը կթոչի: Ես ծառան ինչքան յերգում-կրակն ե  
ընկնում, թե ինքն անմեղ ե, բան չի դառնում: Եսպես  
սպառնալիքով ել բաց ե թողնում ու մինչև մյուս որը  
ժամանակ ե տալիս:

Ահ ու դողով խեղճը բակն ե իջնում, միտք՝ ե անում,  
թե ինչ անի, վոր պրծնի ես փորձանքից:

Գնում ե տեսնում բաղերը բակում ջրափին հա-

վաքված իրար կողք հանգստանում են: Տափակ կտուց-  
ներով մաքրում են փետուրներն ու մի հետաքրքրա-  
կան զրույց են անում: Պատմում են, թե եսոր վորը



վորտեղ ե վորոնել առավոտը ու ինչ համով կեր ե  
գտել իր համար: Մինը վեր ե կալնում թե.  
— Իսկ յես ազահի նման կուլ տվի թագուհու մա-

տանին, վոր պատուհանի տակ ընկած եր, դրանից ստամբոս մի տեսակ ծանր ե, ճնշում ե...

Ծառան տեղն ու տեղը վրա յե թոչում ես ասող բաղի վզիցը բռնում, վազում խոհանոց։ Խոհարարին ասում ե.

— Հապա մի ես բաղը մորթի...բավական գերացել ե...

— Հա, ճիշտ ես ասում, — պատասխանում ե խոհարարը, ձեռքին ծանր ու թեթև անելով, ուտելու համար բավական նեղություն ե տվել իրեն։ Խորոված անելու ժամանակն ե:

Ասում ե ու վիզը թոցնում։ Փորն իստակելիս, ընը, գուրս ե գալիս թագուհու կորած մատանին։

Իհարկե սրանով ել պարզվում ե հավատարիմ ծառայի անմեղությունը։ Բայց վորովհետև թագավորն ել ուզում եր իր մեղքը մի տեսակ քավի, առաջարկում ե նրան մի բան խնդրի, ինչ վոր սիրտը կուզի։ Խոստանում ե՝ պալատական ինչ պաշտոն ել ուզի՝ տա։

Ծառան հրաժարվում ե ամեն պատվից ու պաշտոնից, միայն խնդրում ե, վոր իրեն մի ձի տա, մի քիչ ծախսի փող և ազատություն, վոր գնա ճանապարհորդի աշխարհք տեսնի։

Թագավորը համաձայնվում ե, ձի յել ե տալիս, ճամփու ծախս ել, ու մեր ծառան ճանապարհ ե ընկնում գնում։

Գնում ե, գնում, շատ ե գնում թե քիչ, եղ ել աստված գիտի. մի ջրի ափից անց կենալիս տեսնում ե՝ յերեք ձուկը, վոնց ե յեղել, ընկել են ափի ծանծաղուտը, յեղեգնուտի մեջ թրպտում են ու անջուր տանջվում։ Թեկուղ և ասած ե «անխոս ձուկը», սակայն

մեր հերոսը պարզ լսում ե, թե իրեն տեսնելուն պես ինչպես են խոսում են ձկներն ու գանգատվում իրենց դառը վախճանի վրա։

Ես վոր լսում ե, մեղքը գալիս եւ Զիուց իջնում ե, սրանց վեր առնում յետ ածում ջուրը։ Խեղճ կենդանիները ուրախուրախ սուզվում են ջրի տակը, ապա գլխիկները գուրս են հանում ու կանչում։ «Մենք քու արած լավությունը չենք մոռանալ, ազնիվ տղա. յերբ և իցե մի որ ել մենք քեզ պետքը կդանք»։

Յերիտասարդը եստեղից վեր ե կենում գնում։ Մի քիչ գնում ե, մին ել թվում ե, թե հենց իրեն վոտների տակից մի բարակ, նվազ ձեն ե գալիս. Ներքե ե նայում, տեսնում ե մըջյունների մի բազմություն ե զբժվժում գետնի վրա, ականջ ե գնում, վոր խեղճերը սարսափած լաց են լինում ու եսպես խոսում.

— Ա՞ս, ինչ կիներ, վոր ես մարդիկ ու կոպիտ կենդանիները մեղնից հեռու ման գային. Հիմի ես հիմար ձին, առանց ափսոսելու, իր ծանր սմբակներով կկոխկրտի իմ մարդկանց ու մեր բնակարանները։

Յերիտասարդի մեղքն յեկավ։ Զիու գլուխը ծռեց գեղի կողքի շավիղը, իսկ մըջյունների թագավորը յետեկից կանչեց.

— Շնորհակալ եմ բարի հոգի։ Թե աստված կտա, քո պարտքի տակ չենք մնալ մենք։

Են նեղ շավիղն ել, վոր բռնում ե տղեն, գեպի անտառն եր տանում։ Անտառն ե մտնում, տեսնում ե՝ յերկու պառակ ագռակ իրենց ճուտերին բներից ներքե են թափում ու կոավում են.

— Հենց միշտ հո մենք չենք ձեզ կերակրելու,  
դնացեք ձեզ համար կեր ճարեցեք, ապրեցեք:

Թշվառ ճուտերը խոտերի մեջ թափված, թիերին  
են անում ու խղճալի ճվճլում.

— Մենք խեղճ ճուտեր, փոքրիկ ձագեր,  
Ուրտից գտնենք մեզ տեղ ու կեր,  
Վոչ թե ունենք, վոչ բուն ունենք,  
Մենք ուր գնանք, մենք ի՞նչ անենք...

Յերիտասարդի մեղքը գալիս ե, առանց յերկար ու  
բարակ մտածելու ունեցած չունեցած հացը հանում ե,  
տալիս ագռավի ճուտերին, վոր ուտեն:

— Շնորհակալ ենք, — կանչում են ագռավի ճուտե~  
րը: Քո արած լավությունը մի որ յետ կվճարենք:

Ու վեր ե կենում յերիտասարդը, եստեղից ճամփա  
ընկնում գնում ե: Գնում, հասնում ե մի մեծ քաղաք:  
Տեսնում ե՝ ես քաղաքում ժողովուրդն իրարով ե ան~  
ցել, լցվել փողոցները, մի անասելի~անպատմելի աղ~  
մուկ~աղաղակ, հարա~հրոց: Մինն ել ձի նստած՝ փո~  
զոցե~փողոց անց ե կենում ու կանչում.

— Թագավորի աղջիկը իրեն համար փեսացու յե  
ընտրում: Ով ուզում ե նրա փեսան դառնա—մի գծվար  
գործ պետք ե կատարի. թե կատարեց—լավ, թե չե  
հո՝ գլուխը կթռչի:

Շատերն եյին փորձել թագավորի աղջկա առաջար~  
կը կատարելու, միայն իրենց կյանքն եյին զուր խոր~  
տակել: Բայց մեր յերիտասարդը հենց թագավորի  
աղջկանը տեսնում ե թե չե, ենպես ե խելքը կորցնում  
նրա գեղեցկությունից, վոր ամեն փորձանք ու ամեն  
վտանգ մտքիցը հանում ե, գլխիցը ձեռք ե քաշում,

Ներկայանում թագավորին, թե՝ քո աղջիկը ուզում եմ:  
Եստեղից թագավորի հրամանով տղին տանում են  
ծովի ափը ու մի վոսկի մատանի գցում ծովի մեջ:  
Թագավորն ասում ե.



— Ես մատանին պետք ե ծովի անդունդից հանես  
թե հանեցիր, հո իմ աղիկը քոնն ե, թե չե առանց մա~  
տանի լույս աշխարհք դուրս յեկար, նորից կցցեն ծո~  
վը, մինչև վոր կամ հանես կամ խեղդվես:


Ամենքը ափսոսում են գեղեցիկ յերիտասարդին, վոր մենակ կանգնած եր ծովի ափին։ Ու ծովափին կանգնած՝ նա միտք և անում, թե՛ ինչ անեմ, տեր աստված։ Հենց ես ժամանակ տեսնում ե ալիքների մեջ յերեք ձուկը լողում են դեպ իրեն։ Են յերեք ձուկը, վորոնց կրանքը ինքը փրկել եր մի ժամանակ։ Մեջտեղի ձուկը բերանում բռնած մի խեցի յե բերում, բերում ե, բերում, զնում յերիտասարդի առաջին։ Յերիտասարդը վերցնում ե, տեսնում ե՝ վոսկի մատանին մեջը։ Ուրախուրախ մատանին առնում ե, տանում տալիս թագավորին, են հուսով, թե խոստացած պարգև պիտի ստանա։ Բայց գոռող թագավորի աղջիկը հենց վոր իմանում ե թե յերիտասարդը ծագումով իրեն հավասար չի, յերեսը շուռ ե տալիս ու մի նոր խնդիր առաջարկում։ Իջնում ե այգին ու ինքն իր ձեռքով տասը տոպրակ կորեկ շաղ տալիս, ասում ե.

— Մինչև եգուց առավոտ՝ արեկի ծագումը՝ պետք ե ես կորեկը հավաքես, ենպես, վոր վոչ մինը չկորչի։ Թե հավաքեցիր, ոռ լավ, թե չե՛ գլուխու կթոչի։

Այգում նստում ե ու միտք ե անում յերիտասարդը, թե ինչ հնար գործ դնի, վոր կարողանա ես մի առաջարկն ել գլուխ բերի։ Վոչ մի ճար ու հնար չի գտնում ու տիպուր-տրտում նստած սպասում ե, թե հրես առավոտը լուսին կդան կտանեն գլուխը կտրել տալու։

Միտք ե անում միտք, մինչև թմրում ե, քունը հաղթում ե ու ես մտքի մեջ ել քնում ե։ Առավոտը աչքը բաց ե անում՝ վոր տասը տոպրակ կորեկ կողք կողքի դիմհար տված առաջին շարած են, գետնին ել

մի հատ կորեկ չի մնացել։ Դու մի՛ ասի՞ եդ գիշեր մըջյունների թագավորն իր անթիվ ու անհամար մըջյուններով յեկել ե, ու յերախտագետ մըջյունները շաղտված կորեկը հավաքել են, լցրել տոպրակները, իրար կողքի շարել։



Թագավորի աղջիկն ինքն իր վոտով գալիս ե այդին, իր աչքով տեսնում ե, վոր յերիտասարդը իր ես առաջարկն ել ե կատարել, զարմանում ե, բայց իր գոռողությունից չի կոտրվում ասում ե.

Թեև յերկու առաջարկս ել կատարեցիր, բայց դու  
չես կարող գառնալ իմ ամուսինը, մինչև ինձ համար  
չբերես կյանքի ծառի խնձորը:

Յերիտասարդը իր որումը լսած ել չի լինում, թե  
ինչ բան ե կյանքի ծառը կամ վորտեղ ե բուսնում:  
Վեր ե կենում, մի ճամփա ընկնում, գնում, թե վոր-  
տեղ դուրս կդամ՝ դուրս:

Դնում ե աշխարհք աշխարհք անց ե կենում, մի  
իրիկուն ել մտնում ե մի անտառ, հոգնած մի ծառի  
տակ նստում ե ու ննջում: Հանկարծ լսում ե, վոր  
գլխի վերել ծառի տերևները խշխում են: Ես խշխոցն  
ու վերևից մի վոսկի խնձորը իր բուսն ընկնելը մին  
ե լինում: Սրա հետ միաժամանակ յերեք ագռավ ծա-  
ռի ծերիցը թռչում իջնում են ծնկներին ու ասում.




— Մենք են յերեք  
ագռավների ծագերն  
ենք, վոր դու մի ժա-  
մանակ սովամահից  
ազատեցիր: Յերբ մե-  
ծացանք ու իմացանք,  
վոր դու կյանքի ծա-  
ռի խնձորին ես ման-  
գալիս, թռանք ծովերն անցկացանք, սարերն անցկա-  
ցանք հասանք աշխարհքի ծերը, ուր բուսնում ե կյան-  
քի ծառը, ու ես խնձորը բերինք քեզ համար:

Յերիտասարդը ուրախանում, աշխարհքով մին ե  
լինում, խնձորն առնում ե ու բերում տալիս թագա-  
վորի աղջկանը: Թագավորի աղջիկը խնձորն ել վոր  
տեսնում ե, ասում ե.

— Ել խոսք չունեմ:

Խնձորը կես են անում, միասին ուտում, ու եստեղ  
աղջկա սիրով լցվում ե սիրով դեպի յերիտասարդը:  
Ամուսնանում են ու յերջանիկ, բախտով-թախտով  
միասին ապրում մինչև իրենց խորին ծերությունը:

(1915)



ՑԱՆԿ

	Եջ
1. Անտառի տնակը . . . . .	3
2. Լուսերեսն ու Վարդերեսն	11
3. Սագարած աղջիկը . . . . .	24
4. Զարմանալի աշուղը . . . . .	43
5. Գորտը . . . . .	50
6. Հենգելն ու Գրետելը . . . . .	58
7. Կարմրիկը . . . . .	74
8. Մոխրոտը . . . . .	82
9. Ճերմակ օձը . . . . .	97

---

Պատ. խմբագիր Ն վ ա ր դ Թ ու մ ա ն յ ա ն  
Տեխ. խմբագիր Ս. Ա լ ե ֆ ս ա ն յ ա ն  
Մրգարիչ Ա. Ա ր զ ա կ ա ն յ ա ն

Հըստ. 3780  
Գլավլա 2170  
Պատվեր 888  
Տիբաժ 5000

Հանձնված ե արտադրության 10 հուլիսի, 1936 թ.  
Ստորագրված ե տպելու 20 սեպտեմբերի 1936 թ.

Պետհրատի տպարան, Յեղեվան, II Գնունի, 4

0

ՀՀ Ազգային գրադարան



NL0376610

1283